*ում ներկայանում էր՝ որպէս* «Ոստան Դըւնոյ»[14]:

*Դուին քաղաքի կայացումն ու բարգաւաճումը, տարածաշրջանում կատարած կարեւոր դերը կանխորոշուած էր՝ Խոսրով Կոտակի՝ արքունիքը տեղափոխելու հեռահար, վճռորոշ քայլով, որով եւ դրուեց Դուինի միջնադարեան շրջանի պատմութեան սկիզբը: Իրաւամբ, միջնադարեան Դուինը Խոսրով Կոտակ Արշակունու ծաւալուն, իրատեսական ծրագրի իրականացման անուրանալի արդիւնքն էր:*

14 **Ս. Տ. Երեմեան,** *Հայաստանը՝ ըստ «Աշխարհացոյց»-ի (Փորձ՝ 7-րդ դարի հայկական քարտէզի վերակազմութեան ժամանակակից քարտէզագրութեան հիմքի վրայ)*, Երեւան, 1963, էջ 49

# ՅՈՎՀԱՆՆԷՍ ՕՁՆԵՑՈՒ «ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ» ԺՈՂՈՎԱԾՈՅԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ԵՒ ԱՆԱՆԻԱ ՄՈԿԱՑԻՆ

Ալեքսան Յակոբեան

*Խոսրով Անձեւացի եպիսկոպոսի «ապաստամբութեան» դէմ ուղղուած Անանիա Մոկացի կաթողիկոսի (941-965 թթ.) երեք տարաժամանակեայ թղթերի տուեալները վաղուց արդէն օգտագործւում են բանասէրների կողմից «Կանոնագիրք Հայոց» ժողովածոյի խմբագրութիւնների ընդգրկման ճշգրտումների եւ աղբիւրագիտական ուսումնասիրութեան համար*[1]*: Հայոց այդ եռանդուն եւ յաջողակ հոգեւոր առաջնորդն ու մատենագիրն*[2] *իր ընդդիմախօսների հետ բանավէճերում յղումներ է կատարել բազմազան աղբիւրների, այդ թւում նաեւ Կանոնագրքին՝ տալով վերնագրեր, հեղինակների անուններ, ընդարձակ հատուածներ եւ լրացուցիչ այլ տուեալներ, որոնց արժէքը ժամանակակից աղբիւրագէտի համար դժուար է գերագնահատել: Նրա հաղորդած տեղեկութիւններն օգնում են վերջնական ճշգրտումներ կատարելու նաեւ «Կանոնագիրք Հայոց» ժողովածոյի խմբագրութիւնների մասին մեր կողմից առաջարկուած նոր պարզաբանումների լոյսի ներքոյ*[3]*:*

*«Կանոնագիրք Հայոց» ժողովածոյի գիտական ուսումնասիրութիւնն սկսուել է ԺԹ դարի երկրորդ կէսում, երբ ի յայտ եկան թէ՛ առաջին հետազօտութիւնները (Հ. Յ. Գաթրճեան, Հ. Յ. Տաշեան, Ա. արքեպս. Մխիթարեան եւ այլք), թէ՛ առանձին կանոնախմբերի քիչ թէ շատ համեմատական հրատարակութիւնները: Կարեւոր էր, որ Ա. արքեպս. Մխիթարեանի կողմից հրատարակուած մի քանի ժողովական կանոնախմբեր վերցուած էին Ս. Էջմիածնի մատենադարանի թիւ 751 (ըստ Կարինեան ցուցակի) գրչագրից, որը նաեւ այն ժամանակ մասնագէտներին յայտնի ամենավաղ ձեռագիրն էր՝ ընդօրինակուած 1368-ին Կաֆայում (ներկայումս՝ Մաշտոցի անուան Մատենադարանի, այսուհետեւ՝ ՄՄ, ձեռ. թիւ 659): Միաժամանակ, ուսումնասիրողներն առիթ էին ունենում համեմատելու «Կանոնագրքի» տարբեր խմբագրութիւններ եւ դնելու դրանցից աւելի*

1 Տե՛ս **Հ. Ն. Ակինեան,** *Թուղթ Մակարայ Բ Երուսաղէմի հայրապետի առ Վրթանէս եպիսկոպոսապետ Սիւնեաց Յաղագս կարգաց եկեղեցւոյ*, Վիեննա, 1930, էջ 108. *Կանոնագիրք Հայոց*, Աշխատասիրութեամբ **Վ. Յակոբեանի**, հտ. Բ, Երեւան, 1971, էջ XVI-XIX:

2 Նրա մասին լաւագոյն ուսումնասիրութիւնը շարունակում է մնալ Գալուստ Տէր-Մկրտչեանի յօդուածը. *Անանիա Մոկացի*, «Արարատ», Վաղարշապատ-Ս. Էջմիածին, 1897, էջ 91-96: Այդ հանդէսի նոյն տարուայ միւս պրակներում տպագրուել են նաեւ Մոկացու թղթերի՝ Միաբանի պատրաստած բնագրերը (այսպէս կոչուած «Էջմիածնական Գիրք թղթոցի» երկու գրչագրերից, ներկայումս՝ Մաշտոցի անուան Մատենադարանի թիւ 2966 եւ 3062), այդ թւում՝ 275-288 էջերում՝ «Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի Պատճառ յաղագս զԽոսրով նզովելոյն զԱնձեւացւոց եպիսկոպոսն», «Նորին տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի Յաղագս որ ասեն, թէ մի պատիւ հայրապետին եւ եպիսկոպոսին եւ վասն մի լինելոյ կոչմանն», «Նորին տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի»: Անանիա Մոկացու մասին տե՛ս նաեւ **Մ. արքեպս. Օրմանեան,** *Ազգապատում*, հտ. Ա, Վաղարշապատ-Ս. Էջմիածին, 2001, էջ 1265-1295. **F. Macler,** *Anania Mokatsi, écrivain arménien du Xe siècle*, Révue des études byzantaines, N 101, Louvain, 1930, էջ 5-15:

3 Տե՛ս **Ա. Յակոբեան,** *Յովհաննէս Օձնեցու Նորայայտ տօնացոյցային երկը՝ «Նախահաւատքումն պատմութեան այսմ բանից՝ Յովաննու Վերծանաւղի», «Հանդէս ամսօրեայ»*, ՃԻ տարի, Վիեննա-Երեւան, 2006, էջ 91-98:

© National Library of Armenia

հաւաստիի խնդիրը: Այսպէս, Հ. Յ. Տաշեանը եւ Մ. արքեպս. Օրմանեանը գրում էին, թէ երկու հիմնական խմբերից առաւել մեծ հաւանականութեամբ Ը դարի սկզբնօրինակն արտացոլուել է այն գրչագրերում (այսօր դա անուանում ենք դասական խմբագրութեան Բ ձեռագրախումբ), որտեղ Յովհաննէս Օձնեցու կանոնախումբը գրուած է 37-րդ տեղում, ի տարբերութիւն միւս (այսօր անուանուած՝ Ա.) ձեռագրախմբի, ուր այն 24-րդն է[4]:

Զանազան հատուածային կամ մէկ ձեռագրի հիման վրայ կատարուած հրատարակութիւններին (Ա. Դաւթեան, Ա. Ղլտճեան եւ այլք) զուգահեռ սկսեց իրականացուել նաեւ գրչագրերի աւելի խոր հետազօտութիւնը, որի արդիւնքում որոշ ուշացումով յայտնուեց Սիրեկան Տիգրանեանի յատուկ աշխատութիւնը[5]: Ուսումնասիրողը մի քանի տասնեակ ձեռագրեր բաժանել էր վեց խմբերի՝ ցոյց տալով դրանց առանձնայատկութիւնները եւ Յովհաննէս Օձնեցու սկզբնօրինակն արտացոլելու հնարաւորութիւնների չափը՝ ընդ որում, մեծ ուշադրութիւն դարձնելով Էջմիածնի թիւ 751 գրչագրի վրայ: Այնուամենայնիւ, վերջնական ճիւղագրութեան կազմումը Ս. Տիգրանեանը չհասցրեց աւարտին, իսկ 1923 թ. հրատարակուած դասախօսութիւններում, ի վերջոյ, թեթեւօրէն կանգնեց այն դիտարկման վրայ, թէ հաւանաբար հեղինակային սկզբնօրինակն առաւել անխաթար պէտք է պահպանած լինի արդէն մասնագէտների տեսադաշտում գտնուող հնագոյն յայտնի գրչագիրը՝ (Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռագրատան թիւ 131), որն ըստ յիշատակարանի՝ ընդօրինակուել է 1098 թ. (այսօր օգտագործւում է A տառանիշով): Հետագայում Ա. ձեռագրախմբին պատկանող այդ գրչագրի՝ Յովհաննէս Օձնեցու սկզբնօրինակն արտացոլելու հնարաւորութիւնը փորձեց հիմնաւորել նաեւ Հ. Ներսէս Ակինեանը՝ ըստ էութեան բերելով բացարձակութեան աստիճանի:

1964 եւ 1971 թթ. Վազգէն Յակոբեանի աշխատասիրութեամբ լոյս տեսած երկու հատորներով ամբողջացուեց, ըստ բազմաթիւ աղբիւրագիտական վկայութիւնների, համապարփակ ձեւով առաջին անգամ Յովհաննէս Օձնեցու կողմից ի մի բերուած եւ հետագայ դարերի ընթացքում բազմաթիւ նոր կանոնախմբերով լրացուած ու խմբագրուած հայ միջնադարեան գրական մշակոյթի ամէնից աւելի նշանակալի յուշարձաններից մէկի՝ «Կանոնագիրք Հայոց» ժողովածոյի գիտական հրատարակութիւնը[6]: Այն իրօք դարձաւ հայագէտների մի քանի սերունդների իրաւագիտական ու բանասիրական հետազօտութիւնների ամփոփումը եւ աշխատասիրողի կողմից 60-ից աւելի գրչագրերի մանրակրկիտ քննական համեմատութեան՝ յիրաւի անանցելի երախտագիտութեան արժանի արդիւնքը՝ բաւարարելով Ի դարի գիտութեան ամենաբարձր պահանջներին:

Սակայն միեւնոյն ժամանակ ձեռագրական ամբողջ նիւթի աւելի ուշադիր քննութեան արդիւնքում պարզ դարձաւ, որ նշուած հրատարակութեան հետապնդած առաջին խնդիրը, այն է՝ «Կանոնագիրք Հայոց»-ի սկզբնադիր Յովհաննէս Օձնեցու կողմից համախմբուած կանոնական ժողովածոյի նախօրինակի ընդգրկման եւ բովանդակութեան հարցը, կարիք է զգում նոր վերլուծութեան:

4 Հ. Յ. Տաշեան, *Վարդապետութիւն առաքելոց անվաւերական կանոնաց մատեանը, Թուղթ Յակոբայ առ Կորդատոս եւ Կանոնք Թադդէի. քննութիւն եւ բնագիրք*, Վիեննա, 1896, էջ 268. Մ. արքեպս. Օրմանեան, *Ազգապատում*, հտ. Ա, էջ 969-970

5 С. Тигранян, *Древнеармянская книга канонов, Очерки описания и исследования памятника, I, Описательная часть*, Петроград, 1918

6 *Կանոնագիրք Հայոց*, Աշխ. Վ. Յակոբեանի, Երեւան, հտ. Ա, 1964. հտ. Բ, Երեւան, 1971



Գիտաքննական հրատարակութեան հեղինակը, հետեւելով նախորդ ուսումնասիրողների եւ յատկապէս՝ Հ. Ն. Ակինեանի տեսակէտին, ի վերջոյ կանգ է առել այն մօտեցման վրայ, որ Յովհաննէս Օձնեցու կազմած Կանոնագրքի բնագիրը, փաստօրէն, անխաթար ձեւով պահպանուել է 1098 թ. ընդօրինակուած, «Կանոնագիրք Հայոց»-ի՝ մեզ հասած հնագոյն (Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի մատենադարանի թիւ 131) եւ կառուցուածքով ու ընթերցումներով վերջինիս յարող Ա. ձեռագրախմբի միւս գրչագրերում (երկու հիմնական ենթախմբերով)՝ այդպիսով բովանդակելով այդ գրչագրերի առաջին 24 կանոնախմբերը, որոնցից 24-րդը հէնց Յովհաննէս Օձնեցու կանոններն են (32 յօդուածով): Ըստ աշխատասիրողի՝ այդ ժողովածոյին հետագայ երկու դարերի ընթացքում են աւելացել շուրջ մէկուկէս տասնեակ նոր բնագրեր, իսկ Ժ դարի վերջերում հաւաքուած 38 կամ 39 կանոնախմբերի՝ ինչ-որ պատճառով վերադասաւորման ու խմբագրման արդիւնքում կազմուել է մեզ հասած Բ ձեռագրախմբի գրչագրերի (երեք ենթախմբերով) անծանօթ մայր օրինակը, որտեղ Օձնեցու կանոնները դրուած են 37-րդ տեղում:

Հարկ է նշել, որ ի տարբերութիւն նախորդ շատ հետազօտողների՝ Վազգէն Յակոբեանը մանրամասն ուսումնասիրել է նաեւ մէկ տասնեակից աւելի այլ գրչագրեր, որոնք, նրա իրաւացի եզրայանգմամբ, չեն պատկանում «Կանոնագիրք Հայոց»-ի Ա եւ Բ ձեռագրախմբերին (տեղին նշենք, որ նրանք մասնաւորապէս չունեն ընդհանուր յօդուածացանկ եւ առարկայական ցանկեր): Նա գնահատել է դրանք իբրեւ պարզապէս «Կանոնագրքի» հետագայ համառօտման արդիւնքներ եւ, ի վերջոյ, հրաժարուելով ամբողջապէս համեմատել նրանց ընթերցումները՝ դրանցից առաւել ուշագրաւները որոշ չափով ներկայացրել է երկու հատորների ծանօթագրութիւններում: Նշենք, որ ուսումնասիրողը նկատել է նաեւ այդ գրչագրերի իւրայատուկ տարբերութիւններն իրարից, որոնք թոյլ են տալիս բաժանել դրանք երկու հիմնական խմբերի եւ մասնաւորապէս առանձնացնել «Կանոնագրքի» այլ օրինակներում չհանդիպող կանոնական մի քանի բնագրերի պարունակութեամբ աչքի ընկնող՝ ՄՄ թիւ 659 (նախկին Կարինեան ցուցակի թիւ 751) եւ վերջինիս համեմատութեամբ բազմաթիւ պակասներ ունեցող, սակայն մնացեալում էական նմանուցող, սակայն մնացեալում էական նմանութիւններ դրսեւորող ՄՄ թիւ 657 գրչագրերը:

ՄՄ թիւ 659 եւ 657 գրչագրերում ներկայացուած «Հայոց կանոնագրքի» տարբերակը վաղուց գրաւել է հետազօտողների ուշադրութիւնը: Թէ՛ քննական հրատարակութեան հեղինակը, թէ՛ նրա նախորդ եւ յաջորդ բազմաթիւ ուսումնասիրողներ զանազան առիթներով նկատել են, որ այդ գրչագրերի պարունակած «լրացուցիչ» կանոնական նիւթերի եւ յայտնի կանոնախմբերում «լրացուցիչ» հատուածների մի մասը շատ դէպքերում աւելի մեծ համապատասխանութիւն է դրսեւորում առանձին կանոնախմբերի այլ եւ կամ հայերէն յայտնի կամ վերականգնուող բնօրինակների հետ[7]: Հ. Ն. Ակինեանը եւ Վ. Յակոբեանը դա թեթեւօրէն համարել են հետագայ միջամտութիւնների արդիւնք՝ ըստ էութեան չխորանալով խնդրի աղբիւրագիտական եւ ձեռագրերի ճիւղագրութեան տրամաբանութեան մէջ (իհարկէ, պարտաւոր ենք նշել, որ նմանատիպ աշխատանքը մեր կողմից

7 Տե՛ս, օրինակ, Մ. Շիրինեան, Գ. Մուրադեան, *Յունարէնից թարգմանուած եկեղեցական կանոնները. Բնագրագիտական դիտողութիւններ*, ՊԲՀ, 2000, թիւ 3, էջ 213-225. A. Mardirossian, *Le livre de canons Arméniens (Kanonagirk' Hayotc) de Yovhannes Awjnec'i*: Église, droits et société en Arménie du IVe au VIIIe siècle, Lovanii, 2004, էջ 504:

© National Library of Armenia

հնարաւոր էր կատարել միմիայն Վ. Յակոբեանի ամենայն ջանասիրութեամբ եւ գրեթէ անթերի ճշգրտութեամբ իրագործուած ձեռագրական ընթերցումների հսկայածաւալ համեմատութիւնից յետոյ եւ դրա շնորհիւ): Այնինչ ակնյայտ է, որ այդպիսի տարբերակի դէպքում ուղղակի հնարաւոր չէ բացատրել, թէ ինչու է աղբիւրների վերհանման ու ներառման նմանատիպ գովելի աշխատանքը կատարուել «օձնեցիական» դասական ու հնարաւորինս համակարգուած բնագրի պակասաւոր եւ խեղաթիւրուած ծաւալի վրայ, այսինքն՝ նրա ո՛չ ամբողջական ընդգրկումով: Ըստ այդմ՝ պարզ է, որ իրականութիւնը հակառակն է, եւ Յովհաննէս Օձնեցու կազմած կանոնական հաւաքածոյին աւելի հարազատ պէտք է համարուի հէնց ՄՄ թիւ 659 եւ 657 գրչագրերում ներկայացուած «Կանոնագրքի» մայր տարբերակը, որը հետագայում լրացումներ ստանալով ու պակասեցուելով (այդ թւում՝ նաեւ կորուստներ ունենալով, օրինակ, հեղինակի Յիշատակարանը), հիմք է դարձել ընդհանուր յօդուածահամարակալումով եւ համակարգման այլ յատկանիշերով օժտուած «դասական» կանոնագրքի ստեղծման (խմբագրման) համար:

Ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ Յովհաննէս Օձնեցու կազմած կանոնական հաւաքածոյի սկզբնագիրը՝ մի կողմից, առանց էական խմբագրումների (թէպէտ եւ արտագրութիւնների ընթացքում որոշակի խեղաթիւրումների ենթարկուելով), հասել է մեզ ոչ միայն ՄՄ թիւ 659 եւ 657 գրչագրերում (մեր քննական բնագրի համեմատութիւններում եւ ստորեւ նրանց ընթերցումները ներկայացրել ենք E եւ $e_1$ տառանիշերով՝ հետեւելով Ս. Տիգրանեանին. չշփոթե՛լ Վ. Յակոբեանի՝ նոյն E տառանիշով ԺԷ դ. գրչագրի հետ) եւ Վ. Յակոբեանի հրատարակութեան Ա հատորի յաւելուածում աշխատասիրողի տպագրած պատառիկում, այլեւ աղբիւր է դարձել 7 կանոնախմբերի ընդգրկմամբ մի համառօտ «Կանոնագրքի» տարբերակի ստեղծման համար: Վերջինս արտացոլուած է ՄՄ ԺԶ-ԺԷ դդ. թիւ 835, 837, 2576, 7060, 8459, 9311 եւ Վենետիկի՝ ԺԸ դ. թիւ 472 գրչագրերում (նրանց ընթերցումները նշանակում ենք՝ $e_2$):

Նոր քննական հրատարակութեան կազմման աշխատանքների ընթացքում մի շարք իւրայատուկ ընթերցումների վերլուծութիւնից պարզ դարձաւ, որ այս պայմանականօրէն անկախ խմբի (իրականում՝ ինքնուրոյնաբար Յովհաննէս Օձնեցու բնօրինակին յանգող) մի հնագոյն ձեռագիր է համեմատական ձեւով օգտագործել դասական խմբագրութեան Բ ձեռագրախմբի $K_b$ ենթախմբի մայր օրինակի գրիչը: Առաւել մեծ հաւանականութեամբ, հէնց դրա շնորհիւ է նաեւ, որ այդ ենթախմբի գրչագրերում է միայն պահպանուել Յովհաննէս Օձնեցու Յիշատակարանը: Յաւելենք, որ նմանատիպ համեմատութեան հնարաւորութիւն են ունեցել նաեւ հիմնականում A-ից ընդօրինակուած n (ՄՄ ձեռ. թիւ 778, 1621 թ., Կամենից) եւ T (ՄՄ ձեռ. թիւ 9488, 1635 թ., Լւով) ձեռագրերի գրիչները, ինչպէս նաեւ A-ում մօտաւորապէս նոյն ժամանակ մի կորած հատուածի փոխարէն լրացում կատարած անանուն վերականգնողը:

Ըստ E, $e_1$, $e_2$ գրչագրերի պարունակած նիւթի հիման վրայ ամփոփուող պատկերի՝ Ը դարում Յովհաննէս Օձնեցին իր ժողովածոյում ընդգրկել էր Առաքելական անուանուած 3 եւ Թադէոս ու Փիլիպպոս առաքեալներին վերագրուած մէկական կանոնախմբեր, զոյգ «Նիկիական» հաւաքածոները, Գանգրայի, Անտիոքի (իրականում՝ Լաոդիկիայի), Եփեսոսի (Սեւանտոս եպիսկոպոսի թղթի տարբերակով) եւ Շահապիվանի ժողովների կանոնները, դասական հայրերից՝ Բարսեղ Կեսարացու (4), Աթանաս եւ Կիւրեղ Աղեքսանդրացիների, Եփրեմ Ասորու եւ Եպիփան Կիպրացու, հայ վարդապետներից՝ Գրիգոր Լուսաւորչի (2), Սահակ Պարթեւի (6), Յովհան Մանդակունու (2) եւ Եղիշէի կանոնական երկերը, ինչպէս նաեւ իր 32 յօդուած-կանոնները (ընդարձակ «Ատենաբանութեամբ» հանդերձ) եւ «Նախահաւաքումն պատմութեան այսմ բանից» կոչուած նախադրութիւնը (ընդամէնը՝ 34 կանոնախումբ): Կասկածելի է մնում Կոստանդնուպոլսի եւ Եփեսոսի տիեզերական ժողովների կանոնների ընդգրկման խնդիրը, որի մասին՝ ստորեւ: Յովհաննէս Օձնեցին կանոնախմբերի մեծ մասն օժտել էր համառօտ վերտառութիւններ պարունակող յօդուածացանկերով եւ աւարտել աշխատանքն իր Յիշատակարանով: Այսպիսի ծաւալով ու ձեւաւորումով «Կանոնագիրք Հայոց» ժողովածոն համապարփակ ամփոփում էր Ե-Է դդ. ձեւաւորուած կանոնական աւանդոյթի մեծ մասը եւ պատասխաններ պարունակում հայ հասարակութեան գործառութեան փաստօրէն բոլոր խնդիրների վերաբերեալ:

Օգտագործելով տեղը՝ հարկ է առանձին անդրադառնալ Յովհաննէս Օձնեցու կազմած «Կանոնագիրք Հայոց» ժողովածոյին այսպէս կոչուած «Ատենաբանութեան» պատկանելութեան հարցին: Թէպէտ այդ երկասիրութիւնը Գրիգոր Վկայասէրի կազմած գրչագրում (մեզ հասած Արմէնի լեռան Յովանիսի վանքում ԺԳ դ. վերջին կատարուած արտագրութեամբ) պահպանուել եւ ԺԹ դ. սկզբում հրատարակուել է Օձնեցու կանոններից անմիջապէս առաջ, այնուամենայնիւ ցայսօր մասնագէտների կողմից, որքան մեզ յայտնի է, փորձ չի կատարուել համեմատելու դրանք[8]: Իրականում, քիչ թէ շատ ուշադիր ընթերցանութիւնը վեր է հանում բացայայտ կապն այդ երկերի միջեւ, իսկ ԺԹ կանոնում ուղիղ յղում է նկատւում մի «առաջաբանի» վրայ, որն, ըստ ամենայնի, հէնց «Ատենաբանութիւնն» է: Կանոնի բնագիրը հետեւեալն է. «ԺԹ. Արժան է յերեկորինս եւ յառաւաւտինս զկնի ամենայն պաշտամանն նուագել զՍուրբ Աստուածն եւ ապա զհետ բերել՝ յերեկորինսն զՀանգստեան սաղմոս, եւ յառաւաւտինսն՝ զԱրեւագալին սաղմոս, իսկ յորժամ պատարագ մատչի՝ ի սկզբմունս անդ պաշտամանն յիշե՛լ զՍուրբ Աստուածն: Եւ զսոցուն խորհուրդն յԱռաջաբանի անդ հաւաստեաւ յայտնեցաք»: Դժուար չէ նկատել, որ մեր կողմից ընդգծուած յղումը վերաբերում է «Ատենաբանութեան» ԺԳ գլխին, որը, ցաւօք, մեզ չի հասել (մայր ձեռագրում թերթերի պակասի հետեւանքով գրիչ Գորգի կողմից չի ընդօրինակուել բնագրի մի մեծ կտոր՝ ԺԳ գլխի վերջից մինչեւ ԺԴ-ի սկիզբը), սակայն Գրիգոր Վկայասէրի կողմից կազմուած գլխացանկում նրա ընդարձակ վերտառութիւնը (հմմտ. «ԺԳ. Եթէ զՍուրբ Աստուածդ յՈրդի միայն ասացեալ է եւ ո՛չ եւս ի Հայր եւ ի Հոգի, յաղագս որոյ եւ զխաչեցարն զհետ բերել արժան է զկնի միոյ միոյ ասութեան: Յորում եւ՝ թէ ընդէր յառաւաւտինս եւ յերեկոյինս պաշտամունս ի վերջն անցուցանեն զՍուրբ Աստուածդ, իսկ յորում աւուր պատարագ մատչի՝ ի սկզբանն նուագեն») պարզորոշ կերպով ցոյց է տալիս հեղինակի մատնանշած տեղը:

Արդ՝ D եւ $d_1$ ենթախմբերում (որոնց մասին մանրամասն՝ ստորեւ) Յովհաննէս Օձնեցու կանոններից առաջ իբրեւ առանձին կանոնախումբ, «Երանելոյն Յոհաննու Իմաստասիրի» վերտառութեամբ ներկայացուած է «Ատենաբանութեան» մի մեծ կտոր՝ Գ յօդուածն ամբողջութեամբ եւ հատուածներ Դ եւ Ե յօդուածներից: Հաշուի առնելով նշուած խմբագրութեան նաեւ բազմաթիւ ուրիշ կանոնախմբերում նմանատիպ ծաւալուն համառօտումների առ-

8 Հրատարակութիւնը՝ *Յովհաննու Իմաստասիրի Աւանդեցւոյ Մատենագրութիւնք*, Վենետիկ-Ս. Ղազար, 1833: Այս բնագրի ընթերցումները ստորեւ նշում ենք $V_0$ տառանիշով:



© National Library of Armenia

կայութիւնը՝ հաւանական է ենթադրել, որ նրան մայր ծառայած օրինակում ամբողջական «Ատենաբանութիւնը» եղել է Կանոնագրքի սովորական մաս: Նման հնարաւորութիւնն էլ աւելի հիմնաւորուած է դարձնում E գրչագրի մատուցած պատկերի հետ համադրութիւնը: E գրչագիրը թէպէտ, ցաւօք, չի պարունակում այս «Ատենաբանութիւն-Առաջաբանի» բնագիրը, սակայն բարեբախտաբար պահպանել է նրա ընդարձակ վերտառութիւնը՝ իբրեւ Յովհաննէս Օձնեցու կանոնների վերնագիր. «Երանելւոյն ($V_0$ Երանելւոյ) տեառն Յովհաննու ($V_0$ Յովանիսի փիղոսոփայի) Հայոց կաթողիկոսի. Յառաջին կենցաղն ($V_0$ կենցաղն իւր) եւ գալ նորա ($V_0$ ի գալն) յաթոռ քահանայապետութեան եւ ($V_0$ հայրապետութեան եւ հաստատել) բազմապատիկ եւ զանազան կարգս ($V_0$ կարգս եւ կրաւնս) եկեղեցւոյ հաստատեալ. տունս Ի ($V_0$ չիք հաստատեալ...Ի)»: Չնայած առկայ որոշ տարընթերցումներին՝ համապատասխանութիւնն ակնյայտ է, ուստի հասկանալի է, որ Յովհաննէս Օձնեցու սկզբնօրինակ Կանոնագրքում «Ատենաբանութիւնն» ընդգրկուած է եղել իբրեւ հեղինակային սովորական կանոնախումբ:

Սակայն E, $e_1$, $e_2$ խմբից բացի՝ դասական համակարգման յատկանիշներով բնորոշուող Ա եւ Բ ձեռագրախմբերից անկախ եւ օձնեցիական սկզբնօրինակին աւելի մօտ լինելու ակնյայտ նշաններ ցուցաբերող ընթերցումները մեծ ծաւալով առկայ են նաեւ ինչ-որ իմաստով միջանկեալ դիրք գրաւող ձեռագրերի մի մեծ խմբում, որը Սիրեկան Տիգրանեանն առանձնացրել էր D տառանիշով: Ընթերցումների համադիր վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ այդ խումբը (երկու ենթախմբերով, որոնցից աւելի համառօտը՝ 1285 թ. հնագոյն օրինակով, նշանակել ենք $d_1$՝ միւսի համար պահպանելով D տառանիշը) յանգում է Յովհաննէս Օձնեցու սկզբնօրինակի մի լուրջ եւ բաւական մեծ ծաւալով խմբագրման արդիւնքում ի յայտ եկած մայր օրինակի, որից հետագայում առաջացել է նաեւ դասական խմբագրութիւնը:

Իսկ այսպէս ասած «չդասականացուած» վիճակով մեզ հասել է, ինչպէս նշեցինք, այդ մայր օրինակին յանգող մի համառօտուած եւ ընդօրինակումների ընթացքում որոշ խեղաթիւրումների ենթարկուած տարբերակի յանգող խմբագրութիւն՝ իր D եւ $d_1$ ենթախմբերով: Դա Վ. Յակոբեանի կողմից միայն ծանօթագրութիւններում ներկայացուած ԺԶ-ԺԷ դարերի 649, 650, 651, 658, 2964, 3369 (այդպէս նաեւ Վենետիկի Մխիթարեան միաբանութեան Մատենադարանի՝ 1576 թ. ընդօրինակուած թիւ 2175 եւ 1678 թ. առաջ ընդօրինակուած թիւ 345) եւ ՄՄ թիւ 648, 3562 (այդպէս նաեւ Վենետիկի Մխիթարեան միաբանութեան Մատենադարանի՝ 1285 թ. ընդօրինակուած թիւ 274) գրչագրերն են:

Սոյն յօդուածի վերջում իբրեւ յաւելուած ներկայացուած աղիւսակում ներկայացուած տուեալներից երեւում է, որ ոչ միայն ընթերցումներով (որոնք մեր պատրաստած քննական բնագրում ամբողջապէս համեմատուած են), այլեւ կանոնախմբերի դասաւորութեամբ D եւ $d_1$ ենթախմբերը միջանկեալ տեղ են զբաղեցնում Յովհաննէս Օձնեցու ժողովածոյի չխմբագրուած տարբերակների ($Ee_1e_2$) եւ դասական խմբագրմանը յանգող Ա (A եւ B գրչագրեր) եւ Բ ($K_a$, $K_b$ եւ $K_h$ ենթախմբեր) ձեռագրախմբերի միջեւ: Մասնաւորապէս դա վերաբերում է Թադէոս եւ Փիլիպպոս առաքեալների եւ Երկրորդ Նիկիական կանոնախմբերին, որոնք մնացել են շարքի սկզբնական մասում (այդպէս պահպանուել է նաեւ Դասական խմբագրութեան Բ ձեռագրախմբում):

Կարեւոր է նաեւ այն տեղը, ուր D ենթախմբում պահպանուել են Յովհաննէս



Օձնեցուց յետոյ եւ Դասական խմբագրութիւնից առաջ «Կանոնագիրք Հայոց» ժողովածոյ ներմուծուած կանոնախմբերը՝ Սիոն կաթողիկոսի կամ Պարտաւի եւ այսպէս կոչուած Մովսէսի Քերթողահօր (Դասական խմբագրութիւնն իրագործողների մօտ այն վերագրուած է Սահակայ «Վերջնոյ» կաթողիկոսին): D-ում դրանք դրուած են Օձնեցու կանոններից անմիջապէս յետոյ (տե՛ս աղիւսակում 32-34 տողերը), թէպէտ $d_1$ ենթախմբի մայրի գրիչն այդ տեղում թողել է միայն Սիոնի կանոնախումբը[9], իսկ Քերթողահօր կանոնները Օձնեցու երկու կանոնախմբերից երկու տող առաջ:

Պարտաւում 768 թ. տեղի ունեցած եկեղեցական ժողովում ընդունուած Հայոց Սիոն Բաւոնացի կաթողիկոսի (767-775 թթ.) կանոնների խնդիրն այս իմաստով կասկած չի յարուցում: Իսկ Մովսէս Քերթողահօր կամ այսպէս կոչուած «Վերջնոյ Սահակայ» կանոնախմբի ստեղծման ժամանակի եւ գնահատականի հարցը կարիք է զգում պարզաբանման: Նրա բնագրի նոր ուշադիր քննութեան շնորհիւ ճշտւում է, որ այդ կանոնների ստեղծման ժամանակը առաւել մեծ հաւանականութեամբ կարող է կապուել Շիրակաւանի ժողովին յաջորդող՝ Զաքարիա Ձագեցու կաթողիկոսութեան (855-877 թթ.) վերջին տարիներին հայ եւ բիւզանդական եկեղեցիների յարաբերութիւններում նկատուող դաւանական հակամարտութեան ուժեղացման ժամանակահատուածի հետ՝ Հայաստանում Անտիոքի միաբնակ պատրիարքութեան շահերը ներկայացնող Նանա ասորի սարկաւագի եւ Կոստանդնուպոլսի Փոտ պատրիարքի կողմից ուղարկուած Նիկիայի Յովհան արքեպիսկոպոսի որոշակի մասնակցութեամբ: Նոյն ժամանակի համար մատենագրական զանազան երկերում արձանագրուած են Տայքի վտարանդի եպիսկոպոս Սահակ վարդապետի ջանքերը, որը յայտնի էր նաեւ Մռուտ եւ Ապուկուրեշ (ըստ ամենայնի՝ իմա՛ «Էպիկուրեան») մականուններով:

Ինչպէս նշեցինք, Մեծ խմբագրութեանը յանգող համառօտ խմբում ($Dd_1$) ըստ էութեան մեզ անյայտ հիմքերով Մովսէս Քերթողահօր անունը կրող կանոնախումբը Դասական խմբագրութեանը յանգող Ա եւ Բ ձեռագրախմբերում անուանուած է արդէն «Վերջնոյ Սահակայ»: Այս վերջին անուան տակ դասական խմբագրութեան իրագործողները հասկացել են Սահակ Գ Ձորոփորեցի կաթողիկոսին (678-703 թթ.): Այդպէս մտածել են հետագայում նաեւ այն ուսումնասիրողները, որոնք դասական խմբագրութեան Ա եւ Բ ձեռագրախմբերում Յովհաննէս Օձնեցու կանոնախմբից առաջ տեղադրուած (համապատասխանաբար՝ 23-րդ եւ 36-րդ տեղում) այդ կանոնների ընդգրկումը «Կանոնագիրք Հայոց» ժողովածոյ վերագրել են Օձնեցուն: Սակայն նրանք ուշադրութեան չեն առել այն հանգամանքը, որ նոյն հեղինակն իր «Սակս ժողովոցն, որ եղեն ի Հայս» երկում Սահակ Ձորոփորեցուն համարում էր (անկախ դրա իրաւացիութիւնից) Հայոց մէջ Եզր Փառաժնակերտցուց սկսուած քաղկեդոնամէտ դիրքորոշման կրող եւ դժուար թէ այդպիսի ծանր մեղադրանքից յետոյ նաեւ յարմար համարէր նրա կանոնները ընդգրկել իր կազմած Կանոնագիրք-ժողովածոյի մէջ:

Իրականում տուեալ կանոնների հեղինակն ըստ ամենայնի եղել է հէնց Սահակ Մռուտ վարդապետը, որի գրուածքները մեծ դեր էին կատարում Զաքարիա Ձագեցու աթոռակալութեան վերջին տարիներին: Նախ եւ առաջ դա երեւում է «Վերջ-

9 Նոյնպիսին է վիճակը նաեւ Դասական խմբագրութեան Ա ձեռագրախմբում, որտեղ, ի դէպ, Սահակայ Վերջնոյ կանոնները դրուած են Օձնեցու կանոններից անմիջապէս առաջ (տե՛ս աղիւսակի 23-25 տողերը):

© National Library of Armenia

նոյ Սահակայ» կանոնների լեզուաոճական առանձնայատկութիւններից, որոնք էապէս տարբերում են դրանք է դարի երկերին բնորոշ, այսպէս կոչուած՝ «յետդասական հայերէնից»: Այստեղ բաւարարուենք կանոնների ոչ մեծ բնագրի բառագանձի մի քանի նմուշների յիշատակութեամբ. «ապրշում», «խցարգել», «կրաւնաւորանոց», «սքեմաւոր», «սիւնական» հետագայում շատ տարածուած բառերն այս բնագրից յետոյ յիշատակւում են Ժ դարում եւ աւելի ուշ գրուած աղբիւրներում (համապատասխանաբար՝ Մովսէս Դասխուրանցի եւ Միքայէլ Ասորի, Վարք հարանց, Ասողիկ եւ Ճառընտիր (բայց առաջինը՝ Սիոն Բաւոնացի), Վարք հարանց եւ Լամբրոնացի, Վարք հարանց եւ Ոսկեփորիկ): «Առընթերադիր» բառը յիշատակում է նաեւ Զաքարիա Ձագեցին, իսկ «երկաթս առնուլ» եւ «ապուղայ» այլուր չեն յիշատակւում:

Աւելին, նորայայտ որոշ լրացուցիչ աղբիւրագիտական փաստեր (ամփոփուած Նորայր արքեպ. Պողարեանի կողմից[10]) թոյլ են տալիս մտածել, որ Զաքարիա Ձագեցու վախճանից յետոյ Սահակ Մռուտն ինչ-որ ժամանակ տնօրինել է Հայոց հայրապետական աթոռը (մինչեւ Գէորգ Գառնեցու ընտրութիւնը 877-ին) եւ երկու երկերի վերտառութիւններում անուանուել կաթողիկոս: Դրանցից մէկը «Սահակայ Վերջնոյ» կանոններն են (միւսը Բիւզանդիայի Փոտ պատրիարքին ուղղուած պատասխան թուղթն է), ընդ որում՝ այդպէս անուանակոչուած Կանոնագրքի դասական խմբագրութիւնն իրագործողների կողմից, ամենայն հաւանականութեամբ՝ մեզ չհասած ինչ-որ գրառումների հիման վրայ (կանոնների երկրորդ վերնագրում յիշատակուած Յովհանը «[...] քաղաքից», որը հարցումներով դիմել էր Սահակին, ըստ ամենայնի պէտք է նոյնացուի կա՛մ Նիկիայի միտրոպոլիտի, կա՛մ Նանա Ասորու հետ):

Համառօտ յաւելենք, որ մեր կարծիքով հիմքեր կան Յովհաննէս Օձնեցու սկզբնօրինակին հետագայում աւելացուած կանոնախումբ համարել նաեւ Ներսէսի ու Ներշապուհի կանոնները: Դրանց վերտառութեան տարբերակները թէ՛ Մեծ խմբագրութեան D եւ $d_1$ համառօտուած ենթախմբերում, թէ՛ Դասական խմբագրութեան գրչագրերում պահպանել են Ներշապուհ եպիսկոպոսի անունը: Միաժամանակ մեզ համար յատկանշական է ներկայանում այն հանգամանքը, որ Յովհաննէս Օձնեցին իր «Սակս ժողովոցն, որ եղեն ի Հայս» երկում չափազանց մեծ նշանակութիւն տալով Ներսէս Բագրեւանդեցի կաթողիկոսի (548-557 թթ.) գործունէութեանը ու նրա գլխաւորութեամբ գումարուած Դուինի 554 թ. եկեղեցական ժողովին՝ այդ կաթողիկոսի անուան կողքին մշտապէս յիշատակում է Պետրոս Սիւնեաց եպիսկոպոսին: Այնինչ Ներշապուհ Մամիկոնէից եպիսկոպոսի անունը բացակայում է Յովհաննէս Օձնեցու՝ ըստ ամենայնի իր կեանքի նախավերջին տարիներից մէկում գրուած այդ երկում, որը դժուար թէ հնարաւոր լինէր, եթէ դրանից առաջ հեղինակն իրօք արտագրած լինէր Ներսէսի եւ Ներշապուհի անունները կրող բաւականին ծաւալուն կանոնախումբը:

Ամփոփելով D եւ $d_1$ ենթախմբերի համառօտուած տարբերակում պահպանուած նաեւ միւս կանոնախմբերի տուեալների համեմատութիւնը E գրչագրի մատուցած պատկերի հետ՝ կարող ենք արձանագրել, որ Բագրատունեաց թագաւորութեան հաստատման նախօրեակից ոչ վաղ եւ մինչեւ դասական խմբագրման իրագործումը Յովհաննէս Օձնեցու ժողովածոն լրացուել է

10 Հ. Պ. Անանեան, *Զաքարիա Հայոց կաթողիկոսի եւ Աշոտ իշխանաց իշխանի թղթակցութիւնը Փոտ պատրիարքի եւ Նիկողայոս Ա պապի հետ*, Վենետիկ-Ս.Ղազար, 1992



յունարէն կանոնական բնագրերի ակնյայտ յունաբան ոճով կատարուած թարգմանութիւններով, մասնաւորապէս՝ Անտիոքի Ա, Լաոդիկիայի (երկուսն էլ՝ լիարժէք ծաւալով) ու Սարդիկէի եկեղեցական ժողովների պակասող կանոններով եւ Հայաստանում ստեղծուած կանոնախմբերով՝ Ներսէսի ու Ներշապուհի, «Վերջնոյ» Սահակայ (ինչոր պատճառով անուանուած նաեւ՝ Մովսէս Քերթողահօր) եւ Սիոն Բաւոնացու (այսինքն՝ 768 թ. Պարտաւի ժողովի): Խմբագրումն իրագործողները նաեւ առանձնացրել են «Առաջին Նիկիական» անուան տակ Ե դարից ի վեր միաւորուած 4 ժողովների (Նիկիայի, Անկիւրիայի, Կեսարիայի եւ Նէոկեսարայի) կանոնախմբերը եւ օժտել դրանք առաջաբաններով, դուրս են թողել Գրիգոր Լուսաւորչի, Բարսեղ Կեսարացու եւ Յովհան Մանդակունու մէկական կանոնական թղթեր եւ Օձնեցու «Նախահաւաքումնը» եւ Յիշատակարանը (այս վերջինը, հաւանաբար, պարզապէս բացակայել է ձեռքի տակ եղած մայր օրինակում), որոշ ամբողջական կանոնախմբեր բաժանել են առանձին յօդուածների (Սահակ Պարթեւի, Յովհան Մանդակունու), ինչպէս նաեւ կատարել էական համառօտումներ եւ առաջաբանային յաւելումներ միւսներում:

Արդ՝ ԺԱ դ. երկրորդ կէսից առաջ այս «մեծ» խմբագրման հիման վրայ կատարուել է Կանոնագրքի 40 կանոնախմբերի նոր, «դասական» համակարգում, որի ընթացքում մուծուել է յօդուածների ընդհանուր համարակալում եւ կազմուել են նրանց ընդհանուր եւ առարկայական ցանկերը, ինչպէս նաեւ աւելացուել 5 նոր կանոնախմբեր: Դրանք են. Մակար Երուսաղէմացու, Գրիգոր Աստուածաբանի, Աբրահամ Մամիկոնէից եպիսկոպոսի, Աղուէնի եւ Դուինի ժողովների կանոնները: Իհարկէ, գուցէ հնարաւոր էր ենթադրել, թէ, քանի որ D, $d_1$ խմբերը ներկայացնում են «մեծ» խմբագրման որոշ չափով համառօտուած տարբերակը, ապա նշուած 5 կանոնախմբերը կարող էին յաւելուած լինել Յովհաննէս Օձնեցու ժողովածոյին արդէն մեծ խմբագրութեան իրագործողների կողմից: Սակայն դրանց մուծումը դասական խմբագրման ժամանակին վերագրելու համար բաւարար հիմք է թւում արդէն այն, որ դասական խմբագրութեան թէ՛ Ա, թէ՛ Բ ձեռագրախմբերում այդ 5 կանոնախմբերի մեծ մասը համապատասխան ցուցակների հերթականութեան մէջ տեղադրուած են վերջին տեղերում:

Մեծ եւ Դասական խմբագրումների իրագործման ժամանակի էլ աւելի ճշտման հարցում մեզ օգնում է, նախ եւ առաջ՝ մեզ հասած երկերում Անանիա Մոկացու կողմից Մակար Երուսաղէմացու կանոնները, Աղուէնի կանոնները եւ Վաչախումբը, Աղուէնի կանոնները եւ Վաչագան արքային «չճանաչելու» հանգամանքի մասին դիտարկումը: Սրանցից աւելի կարեւորը Մակար Երուսաղէմացու կանոնախմբի չիմացութիւնն է (վաղուց նկատուած մասնագէտների կողմից), քանի որ հէնց նրանում ուղղակիօրէն շարադրուած են Անանիա Մոկացու պաշտպանած դրոյթներն ամենայն հիմնաւորուածութեամբ: Կարեւոր է նաեւ այն փաստի արձանագրումը, որ Մոկացին օգտուել է «Կանոնագիրք Հայոցի» մեծ խմբագրութեան տարբերակից (ոչ թէ Յովհաննէս Օձնեցու հաբերակից), քանի որ մասնագէտները նկատուած էին դրանցից տասը) նաեւ Օձնեցու ժողովածոյում բացակայող Կոստանդնուպոլսի եւ Եփեսոսի Ա (Եփեսոսի Բ-ն եւս օգտագործուած է, ընդ որում այնպիսի ընթերցումներով, որոնք բացակայում են դասական խմբագրութեան ձեռագրերում) ժողովական կանոնախմբերը:

Անանիա Մոկացին խոսրով Անձեւացի եպիսկոպոսի դէմ գրուած իր թղթերում

© National Library of Armenia

*օգտագործել եւ յիշատակել է 12 կանոնախմբեր, որոնք են. Առաքելական Առաջին («Արարատ», 1897, էջ 278, սիւն. 2, 284, սիւն. 1, 288, սիւն. 1), Առաքելական Երկրորդ կամ Կղեմայ (էջ 279, սիւն. 1, 285, սիւն. 2, 287, սիւն. 2, 288, սիւն. 1), Հարանց հետեւողաց (էջ 285, սիւն. 2), Նիկիոյ Առաջին (էջ 281, սիւն. 2), Նիկիոյ Երկրորդ (էջ 281, սիւն. 2), Բարսեղ Կեսարացու Երկրորդ, որը դասական խմբագրութեան մէջ առաջինն է (էջ 282, սիւն. 1), Սահակ Պարթեւի չորրորդ, որը դասական խմբագրութեան մէջ միաւորուած է մնացեալ հինգի (A-ում՝ չորսի) հետ (էջ 285, սիւն. 2), Շահապիվանի (էջ 282, սիւն. 1), Կոստանդնուպոլսի (էջ 283, սիւն. 1-2, 284, սիւն. 2) եւ Եփեսոսի (էջ 279, սիւն. 1) ժողովների (վերջինս, ինչպէս կը տեսնենք ստորեւ՝ Առաջին եւ Երկրորդ կամ Սեւանտոսի տարբերակներով): Դրանցից եօթը (Առաքելական Առաջին եւ Երկրորդ, Հարանց հետեւողաց, Նիկիոյ Երկրորդ, Բարսեղ Կեսարացու, Սահակ Պարթեւի եւ Շահապիվանի) որեւէ նպաստ չեն բերում կանոնագրքի խմբագրութիւնների տրամաբանութեան ճշտմանը (չնայած կարեւոր են քննական ընթերցումների ճշտման համար), սակայն մնացեալները թոյլ են տալիս ընտրութիւն կատարել Կանոնագրքի խմբագրութիւնների՝ Օձնեցու սկզբնօրինակին յանգելու հաւանականութեան խնդրում, իսկ երկուսը՝ Կոստանդնուպոլսի եւ Եփեսոսի տիեզերական ժողովների յիշատակումներով, միակ հնարաւորութիւնն են ընձեռում համապատասխան կանոնախմբերի՝ Յովհաննէս Օձնեցու սկզբնօրինակին նրանց պատկանելութիւնը ճշտելու համար: Բանն այն է, որ այդ սկզբնօրինակը համեմատաբար անխախտ պահպանած E, $e_1$ գրչագրերում եւ $e_2$ ենթախմբում Կոստանդնուպոլսի ժողովի կանոնները բացակայում են, իսկ Եփեսոսի ժողովի անուան տակ ներկայացուած են միայն այսպէս կոչուած Սեւանտոսի կանոնները, այսինքն բուն Եփեսոսի ժողովի կանոնախումբը նոյնպէս բացակայում է:*

*Նիկիայի կանոնախմբի «մետասանեւորդ գլխի» յղումից[11] յստակօրէն երեւում է, որ Անանիա Մոկացու օգտագործած Նիկիական կանոնները բաղկացած էին 50 կամ 51 յօդուածներից (վերջին թիւն արձանագրուած է Յովհաննէս Օձնեցու «Սակս ժողովոցն, որ եղեն ի Հայս» երկում[12]), որը համապատասխանում է Օձնեցու համախմբած նախնական Կանոնագիրք-ժողովածոյի վիճակին:*

*Ինչպէս ասուեց նաեւ վերեւում, Նիկիական Առաջին կանոնախումբը Հայոց կանոնագրքի խմբագրութիւններում արձանագրուած է երկու ձեւով: Դասական խմբագրութեան զոյգ խմբագրութիւններում այն բաղկացած է 20 յօդուածներից (իսկ համառօտուած D եւ $d_1$ ենթախմբերում՝ երկուսով պակաս) ինչպէս դա պահպանուած է յունարէն բնօրինակում: Ընդհանուր առմամբ համապատասխանութիւնը յունարէնին դրսեւորւում է նաեւ մնացեալ յատկանիշներում՝ առաջաբանը, վերջաբանը (Կոստանդինոս Մեծի նամակը) եւ մասնակիցների ցուցակը: Առկայ տարբերութիւնները համեմատաբար մեծ չեն եւ լիովին տեղաւորւում են թարգմանութեան գործընթացում բնական միջամտութիւնների չափի մէջ[13]: Միւս տարբերակը պահպանուած է E, $e_1$ գրչագրերում եւ $e_2$ ենթախմբում, որտեղ Նիկիական կանոնների անուան տակ հանդէս են գալիս բուն Նիկիոյ ժողովի կանոնների մեծ մասը եւ դրանց միացուած Անկիւրիայի, Կեսարիայի եւ Նէոկեսարիայի ժողովների կանոնները որոշ բացառութիւններով, ընդամենը՝ 50 յօդուած-կանոնով: Վերջին թիւը, ինչպէս ասացինք, նշուած է Յովհաննէս Օձնեցու մէկ այլ երկասիրութեան մէջ, այսպէս կոչուած «Սակս ժողովոցում», թէկուզ եւ «ԾԱ» (51) տարբերակով[14]:*

*Նշուած հատուածում Անանիա Մոկացին գրում է. «ասի ի Նիկիայ սուրբ ժողովոյն մետասան գլուխն. Որք երիցունք լինին եւ այլոց ժողովրդեանն ցանկայ յափշտակել՝ զայնպիսին ընկեսցեն ի բաց յաթոռոյն եւ ի կարգէ քահանայութեան եւ բնաւ իսկ ի պաշտամանէն ի բաց մերժեսցեն»: Ըստ Կանոնագրքի՝ մեր կողմից պատրաստուած քննական բնագրի (որի կարեւոր ընթերցումները նշում ենք ստորեւ տրուող կտորներում)՝ դրա դիմաց ունենք. «ԺԱ. (ABK$_{abh}$ ԺԵ.) ...որք եպիսկոպոսք (EK$_{bh}$ եպիսկոպոս) լինին եւ զայլոյ վիճակ ($e_2$K$_b$ զայլոց վիճակս) յափշտակել ջանան, եւ որք երիցունք լինին եւ այլոց (BEK$_{ah}$ այլոյ) քաղաքի եւ ($e_2$ չիք քաղաքի եւ) ժողովրդեան (K$_h$ ժողովրդեանն) ցանկան ($e_2$ ցանկայ) յափշտակել՝ կամ եղեւ մեծ ժողովոյն, զի ($e_2$ չիք զի) զայնպիսիսն դադարեցուսցեն յիւրաքանչիւր վիճակի: Ապա եթէ ի բռնութենէ ոք եւ կամ ի լեզուանութենէ եւ (ABK$_{abh}$ չիք ոք եւ...եւ) կամ կաշառաւք զգործն զայն յանդգնեսցի (ABK$_h$ յանդգնեաց) գործել՝ ընդդէմ (ABK$_{abh}$ եւ ընդդէմ) եկեսցէ առաքելական կանոնաց (ABK$_{abh}$ կանոնիս). կամ եղեւ սուրբ եւ մեծ (E չիք եւ մեծ) ժողովոյն, զի զայնպիսիսն (E զայնպիսին, $e_2$ չիք դադարեցուսցեն յիւրաքանչիւր...զայնպիսիսն) ընկեսցեն ի բաց յաթոռոյն (ABK$_{ah}$ յաթոռոյ) եւ ի կարգէ քահանայութեանն ($e_2$K$_{ah}$ քահանայութեան) եւ բնաւ իսկ ի պաշտամանէն ($e_2$ պաշտպանէ, E պաշտաւնէն) ի բաց մերժեսցեն (ABK$_{abh}$ ի բաց մերժեսցեն ի պաշտամանէն)»[15]:*

*Նոյն հանգամանքն ուղղակի արձանագրուած է Անանիա Մոկացու յաջորդ յղման մէջ. «Նէոյկեսարեայն (Ա. Նեոյկեսարիայն), որ եւ այն Նիկիա անուանի. Վասն երիցանց, որ ի բռնութենէ հեթանոսաց տարեալ, զանազանս զոհեցին եւ ճշմարտութեամբ դարձան, զպատիւ յաթոռոյն կալցին, այլ ի թարգմանութեան[16] նստեալ կամ պատարագ մատուցանել կամ Աւետարան կարդալ՝ ո՛չ ունի իշխանութիւն»[17]: Դրա դիմաց կանոնագրքում ունենք. «Իէ. (ABK$_{abh}$ Ա. [Անկիւրեայ]) Վասն երիցանց, որք (E Երիցունք, որ, $e_1$ Վասն որ) ի*

---

11 «Արարատ», 1897, էջ 281, սիւն. 2:

12 Այստեղ ասւում է (տալիս ենք նաեւ կարեւոր տարընթերցումները). «Առաջին ժողով արար երանելի հայրապետն մեր սուրբն Գրիգոր, ի քսաներորդ (e Ի, ii,$i_2$ քսաներորդի, m ի Ի-երրորդի, s ի Ի) ամի կաթուղիկոսութեան իւրում եւ յերեսուն եւ եւթն ամի թագաւորութեանն Տրդատայ, ի թագաւորաբնակ քաղաքին յարքայութեանն Հայոց, յորժամ եկն Ռստակէս (s Առիստակէսի՝ կանոնական գրով) ի Նիկիայ (i Նիկիոյ) սուրբ ժողովոյն, բերելով ընդ ինքեաւն զգիր կանոնաց՝ թուեալ միահամար կարգաւ (e միահամուռ կարգաց) տունս ԾԱ ($i_1$ $_2$m Ա.), յոր (a յորս) նայեցեալ սրբոյն Գրիգորի՝ սուղ ինչ յաւելումն արարեալ յեղեալ (i եդեալ) կանոնսն սուրբ հայրապետացն, որք ի Նիկիայն (e Նիկիա) ժամանեալ ժողով»: Ըստ Վ. Յակոբեանի՝ այս ԾԱ թիւը ինչ-որ ձեւով կարող է վերաբերուել 116 յօդուածից բաղկացած Նիկիական Երկրորդ կանոններին (տե՛ս Կանոնագիրք Հայոց, հտ. Բ, էջ LVIII-LX), սակայն այդպիսի պնդումը չի կարող լուրջ քննութեան առարկայ լինել: Տեղին նշենք, որ «Սակս ժողովոցն» երկի վերը բերուած բնագրում կանոն-յօդուածների համար «տուն» եզրոյթի օգտագործումը («տունս ԾԱ.») թոյլ է տալիս այն նախընտրելի համարել նաեւ Կանոնագրքի առանձին մասերի վերնագրերի մէջ (այդ եզրոյթը սովորական է $Ee_1$ գրչագրերի տարբերակում)՝ փոխանակ «գլուխ» եզրոյթի, որն օգտագործուած է Մեծ եւ Դասական խմբագրութիւնների ABK$_{abh}$ եւ $Dd_1$ գրչագրերում:

13 Տե՛ս *Կանոնագիրք Հայոց*, հտ. Ա, էջ 114-150:

14 Տե՛ս *Գիրք թղթոց*. Երկրորդ հրատարակութիւն, Աշխատասիրութեամբ **Ն. արքեպ. Պողարեանի**, Երուսաղէմ, 1994, էջ 474: «Մատենագիրք Հայոց» շարքի հերթական հատորի համար մեր կողմից պատրաստուել է այդ երկի քննական բնագիրը վեց ձեռագրերի ընթերցումների համեմատութեամբ:

15 Առայժմ հմմտ. *Կանոնագիրք Հայոց*, հտ. Ա, էջ 127-128: Ընդգծումներն այստեղ եւ ստորեւ տրուող բնագրերում ամենուր մերն են - Ա. Յ.:

16 Տպագրում Գ. Տէր-Մկրտչեանի կողմից վերծանուած է «թարգմանութեանն ստեալ» (սիւն. 2, ծան. 6):

17 «Արարատ», 1897, էջ 281:



© National Library of Armenia

բռնութենէ հեթանոսաց մինչեւ ի ($BDd_1e_2K_{ab}$ չիք ի) տանջանս ածել ի վերայ եւ մահ սպառնալ եւ նոքա առ երկեղի ($Dd_1$ երկիւղի) զոհեցին, ապա ($Dd_1e_2$ եւ ապա) ջանացան ($e_2$ բազում ջանեաւք), նկրտեցան ($e_2$ չիք նկրտեցան) եւ ($Ee_1$ չիք ջանացան...եւ) ճշմարտութեամբ դարձան. վասն այնպիսեացն ($ABDd_1K_{ah}$ այսպիսեացս) կամ եղեւ ($Dd_1$ եղեւ սուրբ ժողովոյն), զի զպատիւ ($ABK_{abh}$ չիք զպատիւ) աթոռոյն եւ զկարգն ($ABK_{abh}$ զաթոռոց կարգ, $Dd_1$ աթոռոց ի կարգի / $E$ չիք եւ զկարգն) կալցին, այլ ի թարգմանութեան ($e_2$ թարգմանութիւն) նստել ($B$ նստեալ) կամ պատարագ մատուցանել կամ Աւետարան կարդալ՝ ո՛չ ունին ($Ee_1$ ունի, $Dd_1$ է) իշխանութիւն ($Dd_1$ պարտ)»: Իհարկէ, յունարէն բնօրինակում եւ դասական խմբագրութեան մէջ խօսքը ոչ թէ Նէոկեսարիայի, այլ Անկիւրիայի կանոնախմբի մասին է, սակայն մեզ այստեղ հետաքրքրող առումով տուեալ տարբերութիւնը դեր չի խաղում[18]: Կարեւորն այն է, որ Անանիա Մոկացու ձեռքի տակ եղած Կանոնագրքի օրինակում Նէոկեսարիայի (իմա՛ տուեալ դէպքում՝ Անկիւրիայի) կանոնները ինչ-որ ձեւով համարուել են Նիկիական («որ եւ այն Նիկիա անուանի»):

«Նիկիական» Նէոկեսարիայի (Անկիւրիայի) կանոնների յղման նման նոյն կերպ է Մոկացին արտայայտւում նաեւ Նիկիոյ Բ կանոնների մասին. «Կարճառոտի կանոնաց, որ եւ այն կոչի Նիկիայի՝ ԻԱ գլխոյն. Պարտ է, ասէ, զերիցունս, որ զոհեցին եւ ապա դարձան եւ խոստովան եղեն, ո՛չ ամենեւին լուծանել. աթոռոյն միայն արժանի լինե՛լ, այլ ո՛չ պատարագ մատուցանել եւ ի վարդապետութեան կալ»: Դրա դիմաց կանոնագրքում ունենք. «ԻԱ. Պարտ է զերիցունս, որ զոհեցին եւ ($E$ որ զոհեցին երիցունք իսկ) ապա դարձան ($E$ ի բաց դարձան) եւ խոստովան եղեն ($E$ կացին ի խոստովանութիւն), ո՛չ ամենեւին լուծանել. աթոռոյն միայն արժանի լինե՛լ ($AB$ առնել), այլ ($E$ չիք այլ) ո՛չ պատարագ մատուցանել ($E$ մատուցանել պատարագ նոցա) եւ ո՛չ ի խաւսս ($AK_{ah}$ խաւսսն, $BK_b$ խաւսն) կալ եւ ո՛չ այլ պաշտաւն ($E$ ինչ այսպիսի) պաշտել քահանայութեան ($E$ զքահանայութիւնն)»[19]:

Տեղին նշենք, որ «Նիկիական» անուանուած հինգերորդդարեան այս առաջին հայկական կանոնական ժողովածոյի՝ Յովհաննէս Օձնեցու արտագրած տարբերակում Անկիւրիայի ժողովի կանոնների հատուածն սկսւում է այդ կանոնախմբի ոչ թէ Ա, այլ ԺԱ յօդուածից (յունարէնում՝ Ժ կանոն), ընդ որում Ա-Ժ յօդուածները (յունարէնում՝ Ա-Թ կանոններ) որոշ բացթողումներով դրուած են հայկական Կեսարիայի կանոնախմբի (յունարէնում՝ Անկիւրիայի կանոնախմբի վերջին հատուածը՝ Ի-ԻԵ կանոններ) փաստօրէն նախավերջին ու վերջին Ը եւ Թ յօդուածների (յունարէնում՝ Անկիւրիայի ԻԴ եւ ԻԵ կանոններ) միջեւ: Միւս կողմից, Հայոց կանոնագրքի մեծ խմբագրման ժամանակ առանձին ներկայացուած Անկիւրիայի եւ Կեսարիայի կանոնախմբերում յօդուածների հերթականութիւնը ճշգրիտ համապատասխանում է յունարէն Անկիւրիայի կանոններին, ընդ որում հայերէնի համապատասխան մասերը նոր թարգմանութիւն չեն, այլ ակնյայտօրէն նոյնական են հինգերորդդարեան հաւաքածոյի յօդուածների

18 Կարելի է միայն նշել, որ տուեալ դէպքում Անանիա Մոկացին ամենայն հաւանականութեամբ պարզապէս շփոթութեան մէջ է ընկել: Ընդ սմին շփոթութեան համար գուցէ դեր է խաղացել այն հանգամանքը, որ Նիկիական կոչուած «ընդարձակ» կանոնախմբում Անկիւրիայի ժողովի այս առաջին յօդուածը անմիջապէս յաջորդում է Կեսարիայի ժողովի եօթ յօդուածներին (Նէոկեսարիայի ժողովի կանոնների հատուածը սկսւում է շատ աւելի ստորեւ, ԼԵ յօդուածից):

19 Առայժմ հմմտ. *Կանոնագիրք Հայոց*, հտ. Բ, էջ 76:



բնագրերին: Այսպիսի պատկերը ստիպում է յանգել հետեւեալ երկու եզրակացութիւնների: Առաջին՝ վերը նշուած տասը յօդուածների յետեւառաջութիւնն ի յայտ է եկել հաւանաբար ոչ թէ հինգերորդդարեան ժողովածոն կազմելիս, այլ նրա հետագայ արտագրութիւններից մէկի ժամանակ, մինչեւ Յովհաննէս Օձնեցուն հասնելը, կամ գուցէ անգամ՝ հէնց վերջինիս արտագրութեան ընթացքում: Եւ երկրորդ՝ Ժ դարում Հայոց կանոնագրքի մեծ խմբագրումն իրագործողներն իրենց ձեռքի տակ բացի «Նիկիական» անուանուած չորս (կամ երեք) ժողովների կանոնների յունարէն բնօրինակներից եւ հինգերորդդարեան «Նիկիական» կանոնական հաւաքածոյի Յովհաննէս Օձնեցու արտագրած տարբերակից, ամենայն հաւանականութեամբ, ունեցել են նաեւ կա՛մ վերջինիս աղբիւրի (այսինքն՝ հինգերորդդարեան հաւաքածոյի) ինչ-որ ձեւով անխաթար եւ գուցէ մաս-մաս պահպանուած տարբերակի մի օրինակ, կա՛մ, որ աւելի հաւանական է՝ Օձնեցու «Կանոնագրքի» մի այնպիսի օրինակ, որում ինչ-որ ձեւով նշումներ են եղել «Նիկիական» հաւաքածոյի բնօրինակային մասերի վերաբերեալ[20]:

Արդ՝ բերուած փաստերից երեւում է, որ Անանիա Մոկացին ձեռքի տակ ունեցել է Յովհաննէս Օձնեցու Կանոնագրքի այնպիսի խմբագրութիւն, որտեղ Նէոկեսարիայի (Անկիւրայի) կանոնները եղել են Նիկիականի կազմում, սակայն միաժամանակ յայտնի է եղել, որ դրանք առանձին կանոնախմբեր են, ինչպիսին որ էր նաեւ Նիկիոյ Երկրորդը («Կարճառոտին»): Սա թոյլ է տալիս ենթադրել, որ մօտաւորապէս հէնց իր՝ Մոկացու ժամանակաշրջանում է կատարուել Օձնեցու կանոնագրքի համեմատութիւնը յունարէն բնօրինակի կամ (եւ) նախաօձնեցիական տարբերակների հետ, որի արդիւնքում էլ իրագործուել է այն Մեծ խմբագրութիւնը, որից մի փոքր աւելի ուշ առաջացել է նաեւ Դասական խմբագրութիւնը (իր զոյգ՝ Ա եւ Բ ձեռագրախմբերի տարբերակներով):

Յաւելենք, որ գուցէ պատահական չէ նաեւ այն, որ Սահակ Պարթեւի կանոնների դէպքում (էջ 285, սիւն. 2) Անանիա Մոկացին յղում չի կատարում կանոնախմբի յօդուածահամարի վրայ, որպիսիք, ի տարբերութիւն դասական խմբագրութեան օրինակների՝ չկան Յովհաննէս Օձնեցու սկզբնօրինակը ներկայացնելու աւելի մեծ հաւանականութիւն դրսեւորող $E$ գրչագրի տարբերակում ($e_1$ գրչագրում եւ $e_2$ ենթախմբի օրինակներում Սահակի կանոնները համառօտման պատճառով բաց են թողնուած): Թէպէտ անհրաժեշտ է վերապահութիւն կատարել այն մասին, որ իր թղթի այս վերջին հատուածում Անանիայի յղումները նոյնքան մանրամասն չեն, ինչպէս սկզբում էր: Բացի այդ, ենթադրելի մանրամասնութեան դէպքում սպասելի կը լինէր նրա կողմից Սահակ Պարթեւի կանոնական տուեալ թղթի թուահամարի նշումը (Զորրորդ), որպիսին նոյնպէս չենք տեսնում:

Քննարկենք Անանիա Մոկացու՝ Կոստանդնուպոլսի եւ Եփեսոսի ժողովների կանոններին վերաբերող տուեալները:

Կոստանդնուպոլսի ժողովի մասին նա արտայատւում է հետեւեալ կերպ. «...ուր ապա յետոյ ի բազմանալ քարոզութեանն՝ սուրբ ժողովն Կոստանդնուպաւլսի վասն խնայելոյ ի հեռաւորացն կարիս զչորեսին

20 Բացի այդ, ըստ ամենայնի, ինչ-որ մի գործոն պատճառ է դարձել նրանց համար՝ Անկիւրիայի կանոնախմբից առանձնացնելու վերջին հատուածի ինն յօդուածները (յունարէնում՝ Անկիւրիայի ժողովի Ի-ԻԵ կանոնները) իբրեւ առանձին՝ Կեսարիայի ժողովի կանոնախումբ: Իսկ որպէս վերջինիս աւարտական՝ Ժ յօդուածն նրանք աւելացրել են Յովհաննէս Օձնեցու հաւաքածոյի «Առաջին Նիկիականի» Ծ՝ վերջին եւ յունարէնում ընդհանրապէս բացակայող կանոնը (հմմտ. *Կանոնագիրք Հայոց*, հտ. Ա, էջ 561-562, 573-574):

© National Library of Armenia

գլխաւոր աթոռս յէ դարձեալ աճեցուցին աթոռս, զի մի՛ յանհ[ա]ւատութենէն[21] զրկիցին եւ մի՛ դարձեալ արտաքոյ կարգելոցդ ինքնիշխանականաւք խաղբակե[ս]ցին անկարգութեամբ»[22]: Կանոնագրքում այդ մասին կարդում ենք ժողովական երկրորդ կանոնում. «Բ. Որք արտաքոյ քան զիւրեանց կարգաւորութիւն են եպիսկոպոսք, քան զիւրեանց սահմանս, որ եկեղեցիքն են, ո՛չ պարտ է ի վերայ երթալ եւ շփոթել զեկեղեցիսն, այլ ըստ կանոնիցն. այսինքն է՝ Աղեքսանդրացւոց եպիսկոպոսին՝ որ յԵգիպտոս եկեղեցիքն են՝ տնաւրինել, իսկ որ յարեւելս եպիսկոպոսքն են՝ զարեւելիսն կարգաւորել, պահելով՝ որ ինչ ի կանոնի կայ Նիկիայ ժողովոյն՝ աւագութեան Անտիոքայ եկեղեցին միայն. եւ որք ընդ Ասիեաւն են կարգաւորութեամբ եպիսկոպոսունք՝ որ ինչ յԱսիա միայն՝ կարգաւորութիւն է տնաւրինել. եւ որք ի Պոնտոս՝ զՊոնտացւոցն միայն. եւ որք ի Թրակայ՝ զԹրակացւոցն միայն: Իսկ անկոչ եպիսկոպոսք, որք արտաքոյ կարգաւորութեանն են՝ ո՛չ ի վերայ երթալ առ ի ձեռնադրել եւ կամ այլ ինչ իմիք եկեղեցական տնտեսութեան: Բայց ի պահելոյ կանոնին, որ ինչ գրեալն է վասն կարգաւորութեանց, յայտ է, թէ իւրաքանչիւր նահանգի իւր նահանգին ժողովն կարգաւորեսցէ, որպէս հրամայեալն է ի Նիկիայ (AB Նիկեայ): Իսկ որ (AB որք) ի բարբարոսացն ազգս են (AB չիք են) եկեղեցիք Աստուծոյ՝ տնաւրինել պիտոյ է ըստ սովորութեանս, որ կարգեալն ($K_{abh}$ կարգեալ) է ի հարանցն: Կոստանդինուպաւղսացւոց (AB Կոստանդնուպաւղսացւոյ) եպիսկոպոսին ունե՛լ զպատիւ աւագութեան յետ Հռովմայ եպիսկոպոսին, վասն զի է եւ սա նոր Հռովմ»:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Սոկրատ Սքոլաստիկոսի «Եկեղեցական պատմութեան» հայերէն համառօտ խմբագրութեան մէջ, որը լաւ ծանօթ է Մոկացուն[23], խնդրի ներկայացումը բաւականին նոյնահունչ է. «...եւ հայրապետութիւնս կարգելով՝ բաժանեցին զվիճակս եւ իւրաքանչիւր ումեք մի՛ ելանել ընդ սահմանս իւր: Առաջին՝ Հռոմայ հայրապետութիւն եւ որ ընդ նովաւ են եկեղեցիք եւ սահմանք եւ վիճակք: Երկրորդ՝ Կոստանդնուպաւլսի հայրապետութիւնն[24]. որ էր Եփեսոսի՝ անդր փոփոխի աւագութիւնն: Երրորդ՝ Աղէքսանդր եւ Եգիպտոս եւ եկեղեցիք եւ սահմանք առ ի նմանէ ընկալեալ ձեռնադրութիւն եւ կարգս եւ կրաւնս: Զորրորդն՝ Անտիոք... եւ նորին սահմանք եւ վիճակք եւ եկեղեցիք եւ այլք ի նմին: Եւ Երուսաղէմ եւ որ նորա եկեղեցիք եւ սահմանք եւ վիճակք բաժանեցան եւ տուան ի ժողովոյն: Եւ Կեսարացւոց՝ Պոնտացիք եւ Կապուդկացիք եւ ամենայն Հայք եւ որք ընդ նովաւ են եկեղեցիք եւ սահմանք՝ կարգաւ տուեալ: Եւ Եփեսոսի՝ Ասիա եւ որք ընդ նովաւ են սահմանք եւ եկեղեցիք եւ վիճակք»[25]: Այսպիսով, վերոտին՝ եօթ հայրապետութիւն, ինչպէս արձանագրել է Անանիա Մոկացին («յէ դարձեալ աճեցուցին»), թէպէտ այդ թիւն ուղղակի նշուած չէ ո՛չ Սոկրատի մօտ, ո՛չ Կանոնագրքում:

Նշուած համահունչութիւնը գուցէ թոյլ կը տար մտածել, որ Անանիա Մոկացու աղբիւրը Կանոնագիրքը չէ (այլ միայն Սոկրատ Սքոլաստիկոսը), եւ այդ պատճառով աւելի մեծ կարեւորութիւն տալ մեծ եւ դասական խմբագրումներից զերծ մնացած E գրչագրի տարբերակում Կոստանդնուպոլսի տիեզերական ժողովի կանոնների բացակայութեան փաստին: Սակայն ստորեւ քննարկուող Եփեսոսի ժողովի խնդիրը ցոյց է տալիս, որ E-ում բացակայող այդ ժողովի բուն կանոնները եղել են Մոկացու ձեռքի տակ, ուստի կարելի է առանց կասկածի նոյնը մտածել նաեւ Կոստանդնուպոլսի տիեզերական ժողովի կանոնների մասին:

Եփեսոսի ժողովի մասին Անանիա Մոկացին արտայայտւում է հետեւեալ կերպ. «...եւ զսուրբ ժողովն Եփեսոսի թուեալ ՄԸ կաթողիկոսս եւ Ը եպիսկոպոսս ասէ եւ կամ թէ՝ Առանց մայրաքաղաքացոյն մի՛ իշխել իրս ինչ առնել»[26]: Կանոնագրքում «մայրաքաղաքացիք» եզրոյթը գտնում ենք Եփեսոսի ժողովի բուն (6) կանոններից առաջինում. «Ա. Քանզի պիտոյ էր՝ որ (AB եւ որ) ո՛չ եկին ի ժողովն եւ մնացին ի գաւառին՝ ո՛չ անգիտանալ զկարգաւորեալս, ծանուցանեմք ձերումդ ($K_{abh}$ ձերում) սրբութեան, զի թէպէտ եւ մայրաքաղաքային ($K_{abh}$ մայրաքաղաքին) որ է գաւառիդ, ի բաց կացեալ ի տիեզերական եւ ի սուրբ ժողովոյն, կամ որ յետ այսորիկ՝ ո՛չ (AB այնորիկ) միաւորեսցի, զի կամ ընդդէմ կեղեստիանոսի (AB Կեղիստինոսի) խորհեցաւ Հռովմայ եպիսկոպոսապետին կամ խորհեսցի, սա ընդդէմ եպիսկոպոսաց գաւառին գործել ինչ ո՛չ իւիք կարասցէ ամենայն եկեղեցական հաղորդութեան աստի առնուլ, քանզի անդէն իսկ (AB չիք իսկ) արտաքսեալ է ի ժողովոցս ($K_{abh}$ ժողովոյս) եւ ո՛չ ունի զաղդողութիւն, այլ եւ նոցա եպիսկոպոսաց գաւառին եւ որ շուրջ մայրաքաղաքացիքն են, որք ուղղափառ հաւատոյս խորհին, ընդ նոցա ձեռամբ եղիցի ատենեւիմբ ($K_{abh}$ ամենեւին) եւ յաշտիճանէն եւ յեպիսկոպոսութենէն արտաքսեսցի»[27]: Սակայն բերուած հատուածում խօսւում է միայն «մայրաքաղաքային [եպիսկոպոսների]» մասին, իսկ երկու հարիւրից աւելի (Մոկացու պահպանուած գրչագրերում՝ ՄԸ) «կաթողիկոսների» մասին ասւում է միայն այսպէս կոչուած Սեւանտոս եպիսկոպոսի (ըստ $ABK_{abh}$ գրչագրերի) կանոնախմբում, որը $Dd_1E$ գրչագրերը ներկայացնում են պարզապէս իբրեւ Եփեսոսի ժողովի կանոններ[28]: Այս կանոնախմբի յառաջաբանութեան մէջ, որը պահպանուել է միայն $ABK_{abh}$ գրչագրերում (Յովհաննէս Օձնեցու սկզբնօրինակին աւելի մօտիկ E-ի եւ $Dd_1$ խմբերի մայրերում ըստ ամենայնի թերթերի մի վաղ կորստի հետեւանքով բացակայում են յառաջաբանութիւնը եւ Ա բացակայում են մեծ մասը), կարդում ենք. «Սեւանտոս եպիսկոպոս՝ որ էք յԱստուծոյ, ի Քրիստոսէ եւ ի Հոգւոյն Սրբոյ՝ քահանայից, ի Տեառնէ՝ ողջո՛յն: ՄԺԲ կաթողիկոսք ($K_b$ ՄԾԲ հայրապետ) ժողովեցաք եւ քննեցաք. որպէս եւ գտաք ի Գրոց Սրբոց ցուցաք ձեզ»[29]: Նշենք, որ հայ մատենագրութեան մէջ մեզ յայտնի չէ մի երրորդ ժողովի, որտեղ Եփեսոսի տիեզերական ժողովի հայերը կոչուէին կաթողիկոսներ,

---

21 Տպագրում Գ. Տէր-Մկրտչեանի կողմից սխալ է վերծանուած (սակայն՝ հարցականով)՝ «յանհասութենէն» կամ «յանհաւատութենէն» (սիւն. 2, ծան. 4):

22 «Արարատ», 1897, էջ 284, սիւն. 2:

23 Տե՛ս «Արարատ», 1897, էջ 279, սիւն. 1, ծան. աստղանիշով:

24 Սոկրատի երկի հայերէն թարգմանութեան ընդարձակ բնագրում է (նախորդ գլխում) նշւում՝ «վասն լինելոյ նորա Նոր Հռովմ» (էջ 419):

25 *Սոկրատայ Սքոլաստիկոսի Եկեղեցական պատմութիւն... եւ Պատմութիւն վարուց սրբոյն Սեղբեստրոսի եպիսկոպոսին Հռովմայ...*, Աշխատասիրութեամբ **Մ. Վրդ. Տէր Մովսէսեան**, Վաղարշապատ - Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1897, էջ 419-421):

26 «Արարատ», 1897, էջ 279, սիւն. 1:

27 Հմմտ. *Կանոնագիրք Հայոց*, հտ. Ա, էջ 278-279: Նշենք, որ $Ee_1e_2$ գրչագրերում այս կանոնախումբը բացակայում է, ըստ ամենայնի՝ մի վաղ նախագաղափար օրինակի ինչ-որ մի վրիպման հետեւանքով (մանրամասն տե՛ս ստորեւ), իսկ $Dd_1$ ենթախմբերում բացակայում է միայն այս առաջին յօդուածի բնագիրը:

28 Ըստ E գրչագրի՝ այդ կանոնախմբի վերնագիրն է՝ «Կանոնք սուրբ ժողովոյն Եփեսոսի, որ ժողովեցան ի Հոգւոյն Սրբոյ երկերիւրքն եւ կարգեցին տուին ԺԶ», իսկ ըստ $Dd_1$-ի՝ «Դարձեալ նոցին (d1 նորին, իմա՛ Եփեսոսի ժողովի) այլ կանովնք. գլուխք ԺԶ»: Դասական խմբագրութեան $ABK_{abh}$ գրչագրերը չունեն Եփեսոսի ժողովի անունը, այլ միայն՝ «Թուղթ Սեւանտեայ եղողվի անունը, այլ միայն՝ «Թուղթ Սեւանտեայ եպիսկոպոսի (B եպիսկոպոսի. գլուխ ԺԴ.)»: Հմմտ. *Կանոնագիրք Հայոց*, հտ. Ա, էջ 467, 636:

29 Հմմտ. *Կանոնագիրք Հայոց*, հտ. Ա, էջ 468:



© National Library of Armenia

այլ ոչ թէ եպիսկոպոսներ: Օրինակ, Սոկրատ Սքոլաստիկոսի «Եկեղեցական պատմութեան» թարգմանութեան համառօտ խմբագրութեան մէջ սովորականի պէս կարդում ենք. «Իսկ Նեստոր ո՛չ ընդունի զԿիւրղի թուղթս... եւ բազումս խրոխտաբար խաւսս արարեալ առաջի ամենայն եպիսկոպոսացն՝ որ ճշմարիտ եւ որ սուտ: ...Յայնժամ լինի խռովութիւն ո՛չ սակաւ ի մէջ ժողովոյն, որ էին երեսուն եպիսկոպոսք, որք ըստ Նեստորի եւ Յոհաննու բաժանեցան ըստ արեւելից կողմանցն, իսկ որք ըստ Կիւրղի էին՝ աւելի քան զհարիւր եւ եաւթանասուն. եւ անմիաբան լեալք՝ ծանուցին թագաւորին, որպէս ունի յաղագս այնորիկ անդուստ յիշատակարան նոցա»[30]:

Այսպիսով նկատելի են էական համապատասխանութիւններ Անանիա Մոկացու եզրաբանութեան եւ Կանոնագրքի մեծ խմբագրումից յետոյ ի յայտ եկած $ABDd_1K_{abh}$ գրչագրերի պահպանած բնագրերի միջեւ: Իսկ դա ստիպում է մտածել, որ թէպէտ Կոստանդնուպոլսի եւ Եփեսոսի ժողովների կանոնները բացակայում են $Ee_1$ գրչագրերում ($e_2$-ում համառօտումը, ինչպէս նշուեց, շատ աւելի մեծ է), այնուամենայնիւ դրանք եղել են Յովհաննէս Օձնեցու սկզբնօրինակին համեմատաբար անխաթար ձեւով յանգող այն Կանոնագրքում, որը եղել է Անանիա Մոկացու ձեռքի տակ: Այսպիսով վերջինիս շնորհիւ այդ երկու կանոնախմբերը միանում են մի քանի այլ կանոնական միաւորների թուին («Հարցն հետեւողաց», «Սակակայ կաթողիկոսի» Բ եւ Զ, «Ատենաբանութիւն» «Յիշատակարան»), որոնք բացակայում են $Ee_1$ գրչագրերում ոչ թէ Յովհաննէս Օձնեցու սկզբնօրինակում եղած չլինելու, այլ այդ սկզբնօրինակից կատարուած մի վաղ ընդօրինակութեան մէջ սպրդած վրիպումների հետեւանքով: Փնտրելով նրանց տեղը Օձնեցու սկզբնօրինակի բովանդակութեան մէջ՝ թերեւս կարելի է ենթադրել, որ դրանք հաւանաբար եղել են մեր աղիւսակի 20-րդ տողում գրուած «Եփեսոսի ժողովոյն» Բ կամ Սեւանտոս եպիսկոպոսի կանոնախմբից առաջ, այսինքն՝ միեւնոյն «ԺԶ» նիւթահամարի տակ ակնյայտօրէն հակառակ հերթականութեամբ գրուած «Բարսղի Թուղթ առ Գրիգոր Աստուածաբան» եւ «Խոստովանութիւն Անտիոքայ» կանոնական միաւորներից յետոյ (տող 16-17): Հէնց նշուած հակառակ հերթականութեան փաստն էլ կարող է յուշել Կոստանդնուպոլսի եւ Եփեսոսի (Ա) ժողովական կանոնների վրիպման պատճառը $Ee_1$ գրչագրերի նախագաղափար օրինակներից մէկի գրչի կողմից: Կարելի է ենթադրել, որ նա «Խոստովանութիւն Անտիոքայ» կանոնախումբն արտագրելուց յետոյ նկատել է Բարսեղ Կեսարացու «Թղթի» իր վրիպումը, վերադարձել, ընդօրինակել է այն եւ դրանից յետոյ իր մայր ձեռագիրն առաջ թերթելիս պատահաբար բաց է թողել երկու ոչ մեծ կանոնախմբերն ու հասել Եփեսոսի Երկրորդ (Սեւանտոսի) կանոններին:

Եւ վերջապէս, Անանիա Մոկացուն Մակար Երուսաղէմացու կանոնախմբի յայտնի չլինելու հանգամանքը, ինչպէս նշեցինք՝ իրաւացիօրէն նկատուած նախորդ ուսումնասիրողների կողմից[31], թոյլ է տալիս ճշտել Դասական խմբագրութեան մայր ձեռագրի առաջացման ժամանակը: Դա կարող է բաւարար փաստարկում դիտուել թէկուզ միայն այն պատճառով, որ դժուար է գտնել որեւիցէ պատճառ, թէ ինչո՞ւ Հայոց կաթողիկոսը, իր լուրջ գիտնական ընդդիմախօս Խոսրով Անձեւացի եպիսկոպոսին համոզելու նպատակով բազմաթիւ յղումներ կատարելով «Կանոնագրքի» զանազան հաղորդումների վրայ, «վրիպել» է այն կանոնախումբը (Մակար Երուսաղէմացու), որտեղ ամենից աւելի ուղղակի ձեւով են ներկայացուած հոգեւորական դասերի աստիճանակարգի եւ իրաւասութիւնների մասին իր մօտեցման հիմնաւորումները:

Անանիա Մոկացուն Մակար Երուսաղէմացու կանոնախմբի յայտնի չլինելու փաստին պէտք է գումարել Մեծ խմբագրութեան համառօտուած ձեռագրախմբում ինչպէս նրա, այնպէս էլ Գրիգոր Աստուածաբանի, Աբրահամ Մամիկոնէից եպիսկոպոսի, Աղուէնի եւ Դուինի ժողովների կանոնների բացակայութեան փաստը: Վերջիններս, իհարկէ, ծանօթ չեն նաեւ Անանիա Մոկացուն, սակայն դա չի կարող վճռորոշ հիմնաւորման դեր խաղալ, քանի որ Մոկացու Թղթերում յղումներ կան «Կանոնագիրք Հայոց» ժողովածոյի շուրջ երեքուկէս տասնեակ կանոնախմբերից ընդամենը 12-ի վրայ: Բայց արդէն պատահական չի կարող լինել այն իրողութիւնը, որ $Dd_1$ ենթախմբերում բացակայող նշուած 5 կանոնախմբերը Դասական խմբագրութեան թէ՛ Ա, թէ՛ Բ ձեռագրախմբերում դասաւորուած են մեծ մասամբ (թէպէտեւ տարբեր հերթականութեամբ) վերջին շարքերում: Ա ձեռագրախմբի A եւ B գրչագրերում դրանցից չորսը՝ Մակար Երուսաղէմացու, Դուինի ժողովի, Գրիգոր Աստուածաբանի եւ Վաչագան արքայի (կամ Աղուէնի ժողովի), մեր նշած հերթականութեամբ դասաւորուած են վերջից 2-րդ, 3-րդ, 4-րդ եւ 6-րդ շարքերում (տե՛ս մեր աղիւսակի 35-36 եւ 38-39-րդ տողերը), իսկ Բ ձեռագրախմբում՝ Դուինի, Աղուէնի ժողովների եւ Աբրահամ Մամիկոնէից եպիսկոպոսի կանոնները վերջից 1-ին, 2-րդ եւ 6-րդ շարքերում (տե՛ս մեր աղիւսակի 35 եւ 39-40-րդ տողերը): Ա ձեռագրախմբի մայրի գրիչն առաջ է տարել խնդրոյ առարկայ 5-ից միայն Աբրահամ Մամիկոնէից եպիսկոպոսի կանոնախումբը եւ տեղադրել այն Յովհան Մանդակունու կանոններից յետոյ (տե՛ս մեր աղիւսակի 22-րդ տողը), ըստ ամենայնի՝ պատմական հերթականութիւն ապահովելու նպատակադրումով: Իսկ Բ ձեռագրախմբի մայր օրինակի գրիչն այդպէս է վարուել եւ շատ աւելի առաջ տարել Մակար Երուսաղէմացու եւ Գրիգոր Աստուածաբանի կանոնախմբերը, որոնք տեղադրուել են Աթանաս Աղեքսանդրացու «Հարցմունք եւ պատասխանիք»-ից յետոյ (մէկ շարքի միջակայքով, տե՛ս մեր աղիւսակի 11 եւ 13-րդ տողերը), ըստ ամենայնի՝ նոյն նպատակադրումով:

Դասական խմբագրութեան Ա եւ Բ ձեռագրախմբերում կանոնախմբերի հերթականութեան համեմատութիւնը թոյլ է թականութեան հանելու, որ Անանիա Մոկացու տալիս ենթադրել, որ Անանիա Մոկացու Թղթերի ի յայտ գալուց ինչ-որ ժամանականց ստեղծուած Մեծ խմբագրութեան մայր ժողովածոյից կատարուել է ամենայն հաւանականութեամբ մի այնպիսի ընդօրինակութիւն, որի վերջում գրիչը յաւելել է վերը նշուած 5 կանոնախմբերը: Այդ մայր ձեռագրից այնուհետեւ երկու տարբերակով ստեղծուել են արդէն նաեւ «դասական» համակարգման տարբերը՝ ընդհանուր եւ առարկայական յօդուածացանկերը պարունակող Ա եւ Բ ձեռագրախմբերի մայր օրինակները: Դժուար է ճշգրտորէն պարզել, թէ պարունակո՞ւմ էր արդեօք այդ մայր ձեռագիրն ինքը «դասական» համակարգման տարբեր: Աւելի քան ուշագրաւ է, որ Դասական խմբագրութեան երկու տարբերակների մայրերի ստեղծումն ըստ ամենայնի ընկնում է ժամանակային բաւականին փոքր միջակայքում՝ Ժ դարի ամենավերջից մինչեւ ԺԱ դարի կէսերը (1098-ին արտագրուած A գրչագրի մայր օրինակի ժամանակը), ուստի կարող է անգամ համընկնել: Նկատի ունենք, որ այս վերջին տրամաբանութեամբ «Կանոնագիրք Հայոց»-ի՝ միեւնոյն մայր օրինակից

30 *Սոկրատայ Սքոլաստիկոսի Եկեղեցական պատմութիւն*, էջ 660-662:

31 Տե՛ս Հ. Ն. Ակինեան, *Թուղթ Մակարայ Բ Երուսաղէմի հայրապետի*, էջ 103-106; *Կանոնագիրք Հայոց*, հտ. Բ, Երեւան, 1971, էջ XVI-XVIII:



© National Library of Armenia

*եւ «դասական» համակարգման միեւնոյն տարբերով, բայց երկու տարբերակների ի յայտ գալը, իբրեւ վարկած, թերեւս կարող է վերագրուել մի այնպիսի իւրայատուկ իրավիճակի, երբ մէկ ընդհանուր նպատակագրումը (կամ գուցէ անգամ ուղղակի պատուէ՞րը) իրագործուել է երկու տարբեր (մրցակի՞ց) վարդապետական դպրոցների կողմից: Այնուամենայնիւ խնդրի վերջնական լուծումը պահանջում է լրացուցիչ քննութիւն, նոր հիմքերի բացայայտման ակնկալիքով:*

*Վերադառնալով մի փոքր յետ, յաւելենք նաեւ, որ «Կանոնագիրք Հայոց»-ի՝ վերը նշուած իւրայատուկ տարբերով ու փոփոխութիւններով այսպէս կոչուած Մեծ խմբագրութեան առաջացումը (այնուհետեւ յանգեցրած Դասական խմբագրութեան ձեւաւորման) գուցէ կարելի էր վերագրել եթէ ոչ Հէնց Անանիա Մոկացու վերջին տարիներին (նրա Թղթերի գրուելուց յետոյ), ապա գոնէ դրանց անմիջապէս յաջորդող ժամանակին: Դրա օգտին կարող էր խօսել ոչ միայն այն փաստը, որ Խոսրով Անձեւացու հետ բանավէճի համար մեծ նշանակութիւն ունեցող Մակար Երուսաղէմացու կանոնախումբը շուտով «յայտնւում է» «Կանոնագիրք Հայոց» ժողովածոյի նոր տարբերակում, այլեւ այն, որ Պարտաւի ժողովի (Սիոն կաթողիկոսի) եւ Վաչագան Աղուանից արքայի (Աղուէնի ժողովի) կանոնները կարող էին յայտնուել այդ ժողովածոյի գիտակների տեսադաշտում շնորհիւ Անանիա Մոկացու՝ դէպի Արցախ կատարած այցելութեան եւ «Աղուանից պատմութիւնը» փնտրելու առիթով Հայոց Արեւելից կողմանց ձեռագրական հաւաքածոներում հայ կաթողիկոսի յայտնի պրպտումների արդիւնքում[32]:*

*Ճիշտ է, ժամանակային այդպիսի լուծմանը թերեւս խանգարում է Ուխտանէսի «Հայոց պատմութեան» մէջ պահպանուած միակ յղումը Կանոնագրքի վրայ: Տոմարագիտական տուեալների հիման վրայ բաւականին ճշտուած ժամանակագրութեան համաձայն՝ 980 թ. Անանիա Նարեկացուց պատուէրը ստացած եւ 982 թ. իր երկը շարադրած Ուխտանէս պատմիչը[33] Կոստանդիանոս կայսեր թագի յայտնի պատմութեան առիթով ունի հետեւեալ տեղեկութիւնը. «որում սպասաւորէին հրեշտակք. եւ այսմ վկայի Գիրք կանոնացն Նիկիայ, թէ՝ Այգոյն այգոյն սպասաւորեն հրեշտակք»[34]: Այս տեղեկութեան աղբիւրը գտնում ենք Նիկիական կանոնների այն տարբերակում, որը պահպանուել է E եւ $e_1$ գրչագրերում եւ $e_2$ խմբի ձեռագրերում. «զի հրեշտակ Աստուծոյ դնէր զթագ ի գլուխ նորա այգուց այգուց, եւ ընդ երեկոյս մատուցեալ՝ ի բաց վերացուցանէր՝ աներեւոյթ ի մարդկանէ»[35]: Պարզ է, որ ըստ*

32 Այդ պրպտումների մասին ինքը՝ Մոկացին բաւականին մանրամասն տեղեկացնում է իր միւս քաջ յայտնի Թղթում՝ «Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի Ցաղագս ապստամբութեան տանն Աղուանից, որ ընդ ժամանակս ժամանակս լեալ իցէ ձեռնադրութիւնն արտաքոյ սուրբ Լուսաւորչի աթոռոյն» (հրատարակուած է Գ. Տէր-Մկրտչեանի կողմից՝ «Արարատ», 1897, էջ 124-144, վերահրատարակութիւնը՝ **Գ. Տէր-Մկրտչեան**, *Հայագիտական ուսումնասիրութիւններ*, Աշխատասիրութեամբ **Պ. Հ. Յակոբեանի**, *գիրք Բ*, Վաղարշապատ-Ս.Էջմիածին, 1998, էջ 92-124):

33 Տե՛ս **Հ. Ն. Ակինեան**, *Բանասիրական հատակոտորներ. 3. Ե՞րբ գրած է Ուխտանէս իր Պատմութիւնը*, «Աւետիք», Բէյրութ, 1944, թիւ 5-8, էջ 57: Հմմտ. **Ուխտանէս եպիսկոպոս**, *Հայոց պատմութիւն*, Աշխարհաբար թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները՝ **Վարագ Առաքելեանի**, խմբագիր՝ **Ալ. Յակոբեան**, 2006, էջ 17:

34 Տե՛ս **Ուխտանէս եպիսկոպոս**, *Պատմութիւն Հայոց*, Վաղարշապատ-Ս.Էջմիածին, 1871, Ա, հե, էջ 110:

35 Հմմտ. **Ուխտանէս եպիսկոպոս**, *Հայոց պատմութիւն*, էջ 229, ծան. 254 [խմբագրի]: «Կանոնագրքի» այս հատուածը E գրչագրում պահպանուել է Նիկիական Երկրորդ կանոնների վերջում, իսկ $e_1$ գրչագրում եւ $e_2$ խմբի ձեռագրերում, որոնք չունեն այդ կանոնախումբը՝ Նիկիական Առաջին կանոնների վերջում: Զարմա-



*այս պատկերի՝ $Ee_1e_2$-ի չխմբագրուած վիճակի շրջանառութիւնը գոնէ կենտրոնական Հայաստանում պէտք է հասցնել մինչեւ Ժ դարի 80-ական թուականներ, ուստի հաւանաբար Մեծ խմբագրութեան իրագործումն անհրաժեշտ է վերագրել այդ դարի ամենավերջին:*

*Պարզ է նաեւ, որ պէտք է որոշ ժամանակամիջոց ենթադրել նաեւ Մեծ եւ Դասական խմբագրութիւնների իրագործման միջեւ: Ըստ այսմ, եթէ Մեծ խմբագրութեան իրագործումը ենթադրելի է Ժ դարի վերջերում, ապա Դասական խմբագրութեան ժամանակը հնարաւոր է վերագրել այդ դարի ամենավերջին կամ ԺԱ դարի ամենաառաջին տասնամեակներին: Հետեւաբար կարելի է նաեւ մտածել, որ Բաւաբար կարելի է նաեւ մտածել, որ Բագրատունեաց թագաւորութեան այդ ամենից աւելի բարեյաջող ժամանակահատուածում է իրագործուել «Կանոնագիրք Հայոց» ժողովածոյի վերջնական համակարգումը ընդհանուր յօդուածացանկով եւ առարկայական ցանկերով:*

Նալիօրէն Վ. Յակոբեանի ծանօթագրութիւններում տեղ չի գտել որեւէ յիշատակութիւն այս կարեւոր հատուածի մասին (հմմտ. Կանոնագիրք Հայոց, հտ. Ա, էջ 566-567, հտ. Բ, էջ 343-344):

© National Library of Armenia

# «ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ»-Ի (Ը դար) ԿԱՆՈՆԱԽՄԲԵՐՆ ԸՍՏ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՒ ՁԵՌԱԳՐԱԽՄԲԵՐԻ

| | Զխմբագրուած տարբերակներ | | Մեծ խմբագրութեան (Ժ դ.) համառօտը | | Դասական խմբ-եան (Ժ դ. II կէս) Բ եւ Ա խմբեր | |
|---|---|---|---|---|---|---|
| | E (1368 թ.), $e_1$ | $e_2$ ենթախմբի մայր | D ենթախմբի մայր | $d_1$ ենթախմբի մայր | $K_{abh}$-ի մայր (992-1019 միջեւ) | A (1098 թ.), B |
| 1. | Առաքելական Ա կանոնք | [+1] | Առաքելական Ա | | Կանոնք Առաքելականք Ա | Առաքելական Ա |
| 2. | Կանոնք Առաքելոցն Բ (Կղեմայ) | <Կղեմայ>[Հարց հետեւողաց = 5.] | [+1] | [+2] | Կանոնք Առաքելականք Բ (Կղեմայ) | Առաքելական Բ կանոնք (Կղեմայ) |
| 3. | Թադէոսի առաքելոյ կանոնք [= AB 26.] | Թադէոսի առաքելոյ | Թադէոսի առաքելոյ կանոնք | Թադէոսի առաքելոյ կանոնք | Թադէոսի առաքելոյ կանոնք | Հարցն հետեւողաց [= 5.] |
| 4. | Փիլիպոսի առաքելոյ սահմանք [= AB 27.] | Փիլիպոսի առաքելոյ | Փիլիպոսի առաքելոյ կանոնք | Փիլիպոսի առաքելոյ կանոնք | Փիլիպոսի առաքելոյ կանոնք | Նիկիոյ մեծի ժողովոյն [= E 6./1] |
| 5. | [+1] [ = 5.] | [+1] [տե՛ս 2.] | Հարցն ... զկնի Առաքելոցն | Հարցն ... զկնի Առաքելոցն | Հարանցն հետեւողաց | Անկիւրիայ [= E 6./2] |
| 6. | Նիկիոյ ժողովոյն [Ա] [= AB 4. + 5.-7.] | Նիկիոյ ժողովոյն [= AB 4. + 5.-7.] | Նիկիականք Ա | Նիկիա Ա | Անկիւրեայ [= E 6./2] | Կեսարիայ [= E 6./3] |
| 7. | Նիկիոյ [Բ] [= AB 34.] + Է) Կարգեալ գիրք... + Հաւատ Նիկիոյ | | Նիկիականք [Բ] | Նիկիայ Այլ | Նիկիայ սուրբ ժողովոյն [Ա] [= E 6./1] | Նէոկեսարեայ [= E 6./4] |
| 8. | Գանգրայ կանոնք [= AB 8.] | | Անկիւրեայ [= E 6./2] | Անկիւռեայ [= E 6./2] | Բ Նիկիականք [= E 7.] | Գանգրայ [= E 8.] |
| 9. | Անտիոքացւոց [Բ] [= AB 28.] + Ժ պատգամքն | [+3] | Կեսարեան [= E 6./3] | Կեսարեայ [= E 6./3] | Սրբոյն Գրիգորի առաքելոյ Հայոց [= E 10.] | Անտիոքայ [Ա] |
| 10. | Գրիգորի Պարթեւի Լուս-չին [= AB 11.] | Զ) Ի ս-յն Գրիգորէ Պարթեւի | Նէոկեսարոյ [= E 6./4] | Նէոյկեսարեայ [= E 6./4] | Կանոնք Աթանասի [= E 12.] | Ղաւոդիկեայ |
| 11. | Գրիգորի Պարթեւի Հարցմունք (Քաջանց) | [+1] | Գանգրայ [= E 8.] | Գանգրայ [= E 8.] | Մակարայ Երուսաղէմացւոյ | Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի [= E 10.] |
| 12. | Հարցմունք... սրբոյն Աթանասի [= AB 15.] | Ե) Կանոնք ս-յն Աթանասի | Անտիոքայ [Ա] | Անտիոքայ [Ա] | Կոստանդնուպոլսի ժողովոյն [= E 18.] | Սարդիկեայ |
| 13. | Բարսղի Վասն պէս-պէս ախտից [= AB 36] | Բարսղի Վասն պէսպէս... | Անտիոքայ Բ [= E 9.] | Բ Անտիոքայ [= E 9.] | Երանելոյն [Գրիգորի] Աստուածաբանի | Կոստանդնուպոլսի ժողովոյն [= E 18.] |
| 14. | Բարսղի առ Փիլիքս [= AB 16.] | | Ղաւոդիկեցւոց | Ղաւոդիկեցւոց | Բարսղի առ Աքելիքոս (+ Թէոդորոս) [= E 14. +15.] | Եփեսոսի ժողովոյն [= E 19.] |
| 15. | Բարսղի Դիոդորայ [= AB 16./2] | | Սարդիկէ | Սարդիկէ | Բարսղի Վասն պէսպէս ախտից... [= E 13.] | Կանոնք Աթանասի [= E 12.] |
| 16. | Ժ.Զ/բ) Բարսղի [առ Գրիգոր Ա.-ծաբան] | | Կոստանդնուպոլսի ժողովոյն [= E 18.] | Կոստանդնուպոլսի ժողովոյն [= E 18.] | Եփրեմի Ասորւոյ [= E 34.] | Բարսղի՝ Ամփիւղոքոս (+Թէոդ.) [= E 14. +15.] |
| 17. | Ժ.Զ) Խոստովան-իւն Անտիոքայ [= AB 33.] | | Եփեսոսի ս. ժողովոյն (Ա.) [= E 19.] | Եփեսոսի ս. ժողովոյն (Ա.) [= E 19.] | Ներսէսի կաթողիկոսի եւ Ներշապհոյ | Սահակայ կաթող-ի (Ա.-Ե) [= E 21-25.] |
| 18. | [+1] [= Կոստանդնուպոլսի ժող-յն -AB 13.] | | Եփեսոսի Այլ (Սեւանտեա) [= E 20.] | Բ Եփեսոսի (Սեւանտեա) [= E20.] | Կեսարեայ [= E 6./3] | Շահապիվանի Հայոց [= E 27.] |
| 19. | [+1] [= Եփեսոսի ժողովոյն Ա. -AB 14.] | | *Նիկիայ մնացորդ-ք (Ժ յօդ.)* [=$d_1$ 31.] | Շահապիվանի [= E 27.] | Նէոյ Կեսարեայ [= E 6./4] | Սեւանտեայ (Եփեսոսի Բ) [= E 20.] |
| 20. | Եփեսոսի ժող-յն (Սեւանտեայ) [= AB 19.] | | Կանոնք սրբոյն Աթանասի [= E 12.] | Գրիգորի Լուսաւորչի [= E 10.] | Գանգրեայ [= E 8.] | Ներսէսի կաթողիկոսի եւ Ներշապհոյ |
| 21. | Սահակայ Հայոց կաթող-ի [Ա.] [= AB 17./4] | | Բարսեղի Գիր կանոնական [= E 14.] | Կանոնք սրբոյն Աթանասի [= E 12.] | Անտիոքայ Ա | Յովհաննու Մանդակունւոյ [= E 28.] |
| 22. | [+1] [- Սահակայ Բ = AB 17./1] | | Բարսեղի Վասն հեռանալոյ [= E 15.] | Բարսեղի առ Ակալիքոս [= E 14.] | Խոստովանութիւն Անտիոքայ ժողովոյն [= E 17] | Աբրահամու Մամիկոնէից |
| 23. | Նորին Սահակայ [Գ] | | *Եպիփանու Կիպ-* | *Ներսէսի հայրա-* | Լաւոդիկեայ | Սահակայ Վերջնոյ |



| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | [= AB 17./5] | | *ղացւոյ* [= AB 46.] | *պետին* [= AB 43.] | | [= Մովսէսի Քերթողահօր] |
| 24. | ԻԲ) Վարդապետաց Հայոց [Սահակայ Ե] [= AB 17./2] | | Գրիգորի Լուսաւորչին [= E 10.] | <Մովսէսի Քերթողահօր> [= Սահակայ Վերջնոյ] | Սարդիկեայ | Յովհաննու Իմաստասիրի (Օձնեցւոյ) [= E 30.] |
| 25. | Ի) <Գրիգորի - Եզնակայ> [Սահակայ Դ] [= AB 17./3] | | *Ներսէսի հայրապետին* [= AB 43.] | Ներսիսի կաթող-ի եւ Ներշապհոյ | Եպիփանու Կիպրացւոյ [= E 35.] | Սիոնի կաթողիկոսի (Պարտաւայ) |
| 26. | ԻԳ) <Լուսաւորչի> [-Սահակայ Զ] [= AB 40.] [լոկ վերնագիրը] | | Ներսէսի Մեծի եւ Ներշապհոյ | Սահակայ հայր-ի Գիր աւանդութեան [= E 26.] | Եղիշէի վարդապետի [= E 36.] | Թադէոսի առաքելոյն [= E 3.] |
| 27. | ԻԱ) Վարդապետաց Հայոց (Շահապիվանի) [= AB 18.] | | Սահակայ կաթող-ի Գիր աւանդութեան [= E 26.] | Երանելոյն Յոհաննու Իմաստասիրի [= E 30.] | Եփեսոսի ժողովոյն [= E 19.] | Փիլիպոսի առաքելոյն [= E 4.] |
| 28. | Յովհաննու Մանդակունւոյ Ի խրատս եկեղեցւոյ [= AB 21.] | | Մեծին երանելոյն Սահակայ [Բ] [= E 22.] | Նորին Յոհաննու կանոնք [= E 31.] | Կիւրղի Աղեքսանդրացւոյ [= E 33.] | Անտիոքայ Բ [= E 9.] |
| 29. | ԻԶ) Յովհ. Մանդակունւոյ Կոչումն յապաշխ-իւնն [= AB 57.] | | Սահակայ կաթողիկոսի [Գ] [=E 23.] | Սիոնի կաթողիկոսի (Պարտաւայ) | Սահակայ հայրապետի (Ա-Ե) [= E 21.-25.] | Եփրեմի Խորին Ասորւոյ [= E 34.] |
| 30. | ԻԵ) Եր-յն Յովհաննու կաթ-ի [= Ատենաբ-ն] [=D 31.] [լոկ վերն-ը] | | Շահապիվանի [= E 27.] | *Սրբոյն Եղիշէի ի կանոնս գրոց* [= $K_{abh}$ 41.] | Սահակայ կաթողիկոսի Գիր աւանդութեան [= E 26. լոկ վերնագրով] | Կիւրղի Աղեքսանդրացւոյ [= E 33.] |
| 31. | ԻԵ) Յովհաննու <Մանդակւոյ> [= Օձնեցւոյ] [= AB 24.] | | Երանելոյն Յոհաննու (Օձնեցւոյ) [= E 30.] | *Նիկիա ժող-յն մնացորդական (Ժ յօդ.)* [= D 20.] | Միաբան Հայոց (Շահապիվանի) [= E 27.] | Եպիփանու Կիպրացւոյ [= E 35.] |
| 32. | Նախաձաւաքումն պատմութեան այսմ բանից Յովհաննու Վերծանաւղի | | Նորին Յոհաննու կանոնք [= E 31.] | *Բարսեղի Վասն պէսպէս...(Ա յօդ.)* [= E 14.] | Թուղթ Սեւանդեայ (Եփեսոսի Բ) [= E 20.] | Եղիշէի վարդապետի [= E 36.] |
| 33. | Կիւրղի [= AB 30.] | | <Մովսէսի Քերթողահօր> (= Սահակայ Վերջնոյ) | *կանոնք ժամարարի* | Անտիոքայ Բ [= E 9.] | Խոստովանութիւն Անտիոքայ [= E 17.] |
| 34. | Եփրեմի [= AB 29.] | | Սիոնի կաթողիկոսի (Պարտաւայ) | *Սրբոց կաթող-աց խրատք գուշաւորք* | Յովհաննու Մանդակունոյ կանոնք [= E 28.] | Նիկիոյ Բ [= E 7.] |
| 35. | Եպիփանու [= AB 31.] | | *կանոնք ժամարարաց* | *Դաւիթ Ալաւկարդոյ* | Աբրահամու Մամիկոնէից | Վաչագանայ... Աղուէնի ժողովոյն |
| 36. | Եղիշէի վարդ-ի կանոնաց ասացեալ է [= AB 32.] | | *Սրբոց կաթողիկոսաց խրատք գգուշաւորք* | *Տիտոսի առաքելոյն* | Վերջնոյ Սահակայ [= Մովսէսի Քերթողահաւր] | Բարսղի Վասն պէսպէս ախտից... [= E 13.] |
| 37. | [+ $K_b$ 47.] [= Ցիշատակարան] | | *Դաւիթ Ալաւկարդոյ* | *Յակոբ Ղրիմեցւոյ* | Յովհաննու Իմաստասիրի [Օձնեցւոյ] [= E 30.] | Գրիգորի Աստուածաբանի |
| 38. | | | *Ս-ն Եղիշէի առ ի խրատս* [= $K_{abh}$ 41.] | | Սիոնի կաթողիկոսի (Պարտաւայ) | Դւնայ սուրբ ժողովոյն |
| 39. | | | *Տիտոսի առաքելոյն* | | Վաչագանայ... Աղուէնի ժողովոյն | Մակարայ Երուսաղէմացւոյ |
| 40. | | | *Յակոբ Ղրիմեցւոյ* | | Դրւնայ սուրբ ժողովոյն | Սահակայ Գիր աւանդութեան [= E 26.] |
| | | | | $d_1$ [լոկ ՄՄ 3562, 648-ում] | $K_{abh}$ ($K_b$ / $K_{ah}$) | A, B |
| 41. | | | | *ա) Առաքելական Ա* | *Եղիշէի Ի կանոնական գրոց* | *Յովհան Մանդակունոյ [Բ]* |
| 42. | | | | *բ) Առաքելական Բ* | *Եպ-ք (Նիկիոյ, Կեսարիոյ, Մ. Հայոց, կամսար-ա.,Երուս-ի, կ-Պոլսի)* / *Յովհաննու Կոստանդնուպոլսի* | *կարնոյ ժողովոյն* |

© National Library of Armenia

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 43. | | | | գ) Մակար Երուս-ոյ | Յակոբայ առ Կոդր. | Ագաթանգեղոսի | Ներսիսի հայրապետի |
| 44. | | | | դ) Եպիփանու [Ա] | Եպիփանու [Գ] | Մեսրովբայ | Յովհ. Մանդակունւոյ [Գ] |
| 45. | | | | ե) Կիւրղի Աղեքսանդրացւոյ | Ագաթանգեղոսի | Եպ-ք (Երուս-ի, Պոլսի, Մեծ Հայոց, Կամսարական, Նիկիոյ) [K,-ում՝ բաց] | Դիոնիսիոսի Աթենացւոյ |
| 46. | | | | զ) Եփրեմի Ասորոյ | Մեսրովպայ | Ներսիսի | Եպիփանու [Բ] |
| 47. | | | | է) Սահակայ կաթողիկոսի | Յիշատակարան Յովհաննու Իմաս-րի | Յովհաննու Մանդակունոյ [Գ] | Յովհաննու Երուսաղէմացւոյ |
| 48. | | | | ը) Շահապիվանի | Աւանդութիւն Հրէից | Յովհ. Մանդակոյ կոչումն ապ-ն | Հիպոդիտայ |
| 49. | | | | թ) Յովհ. Մանդ-նոյ | | Եպիփանու | Նեկտառեայ Հռովմայ |
| 50. | | | | | | Ի հարանց վարուց | Մեղիտոնի եպիսկոպոսի |
| 51. | | | | | | Կղեմայ | Աթանասի [Բ] |
| 52. | | | | | | Դիոնիսիոսի Աթենաց-ն | Սեբերիանոսի |
| 53. | | | | | | Դիոնիսիոսի Արիսպագ-ն | Սոկրատայ |
| 54. | | | | | | Կարնոյ ժողովոյն | Դիոնիսիոսի Արիսպագացոյ |
| 55. | | | | | | Հիպոդիտայ | Մանուէղի |
| 56. | | | | | | Մելիտոսի | Կղեմայ Հռովմայ |
| 57. | | | | | | Մանուէլի | Յովհ. Մանդակունոյ Կոչումն Ապաշխ-եան |
| 58. | | | | | | Սոկրատայ | Սիմէոնի Աղուանից կաթ-ի [միայն B-ում] |
| 59. | | | | | | Սիմէոնի Աղուանից | |
| 60. | (= 60. - 72.) | | | | [K,-ն ունի եւս 13 կանոնախումբ՝ Նեկտառեայ, Յովհաննու Երուս-ոյ, Խրատք զգուշաւորք եւ այլն] | | |

## ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

$e_2$ խմբի եւ $e_1$ գրչագրի ունեցած կանոնախմբերը E-ի համեմատ

Մեծ խմբագրութեան յաւելումները $Ee_1e_2$ գրչագրերի համեմատ

Դասական եւ համառօտ խմբագրութիւնների մայրերի յաւելումները Մեծ խմբագրութեան համեմատ

*Շեղատառով* - աւելի ուշ արուած յաւելումները ենթախմբերում

[+1] - Ստորեւ կանոնախմբերի տողահամարները մեծացրել ենք 1(2,3)-ով

*ԻԲ)...ԻԱ)* - Գրչագրում կանոնահամարի շեղումը վերականգնուած մայրից

# ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՆՈՐ ՄԻԱՒՈՐՆԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԵՐԿՈՒ ՁԵՌԱԳՐԻՑ

Կարէն Մաթեւոսեան

*Սամուէլ Անեցու Ժամանակագրութեան ձեռագրերը, հեղինակային բնագրից բացի, պարունակում են հետագայի գրիչների եւ տարբեր անձանց կատարած բազմաթիւ ընդմիջարկութիւններ ու յաւելումներ: Արշակ Տէր-Միքէլեանը, 1893 թ. Վաղարշապատում ձեռքի տակ ունենալով 14 ձեռագիր (մեծագոյն մասը՝ ԺԷ դ.), Անեցու երկը հրատարակել է դրանցում եղած յաւելումներով*[1]*: Այժմ Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանում պահւում է Սամուէլ Անեցու Ժամանակագրութեան 33 ընդօրինակութիւն (ներառեալ Ա. Տէր-Միքէլեանին յայտնի 14 ձեռագրերը), որոնք պարունակում են բազմաթիւ յաւելումներ, ցայժմ չհրապարակուած տեղեկութիւններ ու ժամանակագրական միաւորներ:*

*Սամուէլ Անեցու Ժամանակագրութիւնը մեզ հասած ընդօրինակութիւնների մեծ մասում չարունակուած է*[2]*: Ձեռագրերի գրիչները, առաւել յաճախ ստացողները կամ պատմութեան հանդէպ հետաքրքրութիւն ունեցող տարբեր անձինք, ժամանակագրական աղիւսակները շարունակել են, հասցրել մինչեւ իրենց ապրած ժամանակը եւ լրացրել այլ աղբիւրներից իրենց յայտնի զանգան տեղեկութիւններով: Հաւանաբար, այդպէս վարուելու համար նրանք հիմք են տեսել նաեւ Անեցու երկի վերնագրում՝ «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց՝ յաղագս գիւտ ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս...»՝ արձանագրելով իրենց ապրած ժամանակի դէպքերը: Հէնց այդպէս է վարուել Ստեփանոս Օրբէլեանը, որը, ձեռքին ունենալով Անեցու ժամանակագրութեան լրացուած եւ 1193 թուականով աւարտուող օրինակ, պատշաճ է համարել մէկ հարիւրամեակ ընդգրկող դէպքերի յիշատակմամբ այն շարունակել, ինչպէս ինքն է գրում՝ «...բերել հասուցանել մինչ ի մերս ժամանակս»*[3]*:*

*Ժամանակագրութիւնը բաւականաչափ երկարաձգուած է Մատենադարանի երկու ձեռագրում՝ թիւ 7261-ում այն հասնում է 1702 թ., իսկ թիւ 10202-ում 1692 թ.*[4]*: Թէեւ երկու ձեռագրի գրչութեան*

---

1 *Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց՝ յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ ակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ,* յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով եւ ծանօթութիւններով **Արշակ Տէր-Միքէլեանի**, Վաղարշապատ, 1893 (այսուհետեւ՝ Անեցի):

2 Սամուէլ Անեցին իր Ժամանակագրութիւնն աւարտել է 1163 թուականով: **Կ. Մաթեւոսեան,** *Սամուէլ Անեցու Ժամանակագրութեան հնագոյն ձեռագրերը*, ակադեմիկոս Ն. Մառի ծննդեան 140 եւ մահուան 70-ամեակների տարելիցի ժողովածոյ, խմբագիր՝ **Պ. Մուրադեան**, Եր., 2005, էջ 37-48:

3 *Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի*, հրատարակութեան համար պատրաստեց **Ա. Աբրահամեանը**, Եր., 1942, էջ 21, 31: Այս եւ յաջորդ մէջբերումներում ընդգծումները մերն են՝ Կ. Մ.:

4 ՄՄ ձեռ. թիւ 7261, թերթ 71ա, ձեռ. թիւ 10202, թերթ 75ա: Մատենադարանի ձեռագրացուցակում թիւ 7261 ձեռագրի վերջին թուական է հարուած 1709 թ., իսկ թիւ 10202 ձեռագրինը՝ 1694 թ. (*Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, կազմեցին՝ **Օ. Եգանեան, Ա. Ջէյթունեան, Փ. Անթաբեան**, հտ. Բ, Երեւան, 1970, էջ 494, 1068): Ձեռագրացուցակը կազմողները ժամանակագրութեան վերջին թուական են համարել աղիւսակների այն թիւը, մինչեւ որի դիմաց հասել են բնագրի տողերը: Մինչդեռ ժամանակագրութեան վերջին թուական պէտք է համարել վերջին տեղեկութեան տարեթիւը: Վերջին տեղեկութիւնը (1692 թ.) զբաղեցնում է

© National Library of Armenia